

23(626)

6.08.2021

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՄԵՆ ԵՐԳ ՅՈՒՐՈՎԻ ՈՒՍՈՒՅԻՉ Է

Որտե՞ղ են հիմա մեր «Հայեր, միացե՛ք»-ը, «Ձարթիր, լաո»-ն, «Պատերազմ ենք գնում...»-ը... Դրանք ժամրային առունով երգեր են, սակայն գաղափարական տեսանկյունից կոչ են, պատգամ և ուղենիշ:

Արցախյան առաջին պատերազմի ժամանակ այսօրինակ երգերն ամեն մի հայտնի շուրթերին էին՝ մեծ, թե փոքր: Երգում էին ռազմաճակատ մեկնելիս, ազատամարտիկներին ռազմաճակատ ճամփեղիս, ռմբակաստարաններում և անգամ ռազմական գործողություններից հարյուրավոր կիլոմետրեր հեռու՝ կրթարաններում: Հայրենասիրական երգը զենք էր, հաղթանակի հավատ ու հավատի հաղթանակ: Հրմբացս երգեր էին ծնվում նաև կենդանի լեգենդներին՝ Կոմանդոսին, Ավոյին, մյուսներին...


Երգով կերտվեց Մայիսյան եռատունդ: Եվ թեպետ 1994-ի մայիսի 12-ին ընդամենը հրադադարի մասին համաձայնագիր ստորագրվեց, սակայն դա ըստ էության հաղթանակ էր բազմազուլս հիդրայի դեմ, որը պարտավոր էինք ու այդպես էլ չկարողացանք պաշտպանել: Ի՞նչը խանգարեց ամրապնդել մայիսյան մեր հպարտությունը: Դրա պատասխանը երկի կունենան նորօրյա վերլուծաբանները: Չեք ժխտի, որ նրանք հիմա անհարկի շատացել են. գրում են սոցցանցերում, ամծնական բլոգներում, ճանաչված ու կասկածելի ծագմամբ ՁԼՄ-ներում: Մինչդեռ գերխնդիրը դարձյալ մնում է նույնը, նարատիվը՝ անփոփոխ: Երբ հայոց սահմանից ներս Հայկական բանակն այսօր հակահարված է տալիս ազերիներին, ազգովի հրճվում ենք: Կարծես թե դա այն բանակը չէ, որի առաջ թուրք ասկարը մեկ տարի առաջ ճողոպրում էր: Ի՞նչ է փոխվել այս մեկ տարում, հայի անպարտելիության հավատն է սասանվել, սասունցիդավիթյան սո՛ւրն է կտրվել, թե՛ նոր սերունդն է անվճռական դարձել: Հաստատ դրանցից ոչ մեկը, որովհետև այդքան կարճ ժամանակում հնարավոր չէ բարոյապես տրանսֆորմացվել: Պարզապես անցած երեք տասնամյակներին ինքներս մեզ սնուցել ենք շինծու հայրենասիրությամբ, և դա պարտադրված հայրենասիրություն էր: Մինչդեռ երգն ու հայրենասիրությունը պետք է ինքնաբերական լինեն ու սրտից բխեն:

Նույնիսկ վշտի պահին ազգը ոտքի հանող երգը դառնում է սպեղանի, իսկ ո՞րն է այսօրվա մեր երգացանկը: Համացանցն այս առունով պարբերաբար «անակնկալներ» է մատուցում, մեզ են ներկայացվում չգիտես որտեղ և ում կողմից թխված ԱՆՀԱՅԵՆԵՆ, ծանոթ վարիացիներով՝ գեղագիտությունից միանգամայն զուրկ կլկլոցներ, որոնք միայն տհաճություն են առաջացնում: Մտավախություն կա, որ մատաղ սերունդը չգիտի (կամ վատ գիտի) մեր հաղթանակի երգերը: Եթե չկա ընթացողական մոտիվացիա, ինչպե՞ս պիտի կերտվեն հետագա մեր հաղթանակները:

Ամեն մի հայրենասիրական երգ յուրովի ուսուցիչ է՝ նույնչափ ազնիվ ու խստապահանջ: Այն դարձնենք մեր կենսակերպը՝ հանրային լսարանները վերածելով հայրենասիրության ամբիոնների: Սա նույնպես վերհառնումի ձև է:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԵՎՍ ԵՐԿՈՒ ԴՊՐՈՑ ՈՒՆԵՑԱԿ «ԱՐՄԱԹ» ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ



Շարունակվում է Հայաստանի առաջատար ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) կողմից «Արմաթ» լաբորատորիաների տեղադրումը Արցախի դպրոցներում: Հերթականը հուլիսի 28-ին Մարտակերտի շրջանի



Վերին Հոռաթաղի և Ասկերանի շրջանի Նախիջևանի միջնակարգ դպրոցներում էր: Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը: Վերին Հոռաթաղի «Արմաթ» լա-

բորատորիան բացվել է Արտակ Սարգսյանի «Մեկ ընտանիք Միսիա» բարեգործական ՀԿ-ի, Նախիջևանի «Արմաթ»-ը՝ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի հովանավորությամբ և ԱՏՁՄ-ի ջանքերով: «Մենք միասին կարող ենք գրավիչ դարձնել Արցախի կրթական միջավայրը»,- շնորհակալություն հայտնելով բարերարներին՝ ասաց Լ. Ղարախանյանը:

«Արմաթ» ինժեներական լաբորատորիան միտված է Արցախի կրթական համակարգում տեխնիկական բազան խորացնելուն և մասնագիտական կայուն աշխատուժ ապահովելուն: ԱՀ ԿԳՄՍ-ի նպատակն է բոլոր դպրոցներում բացել «Արմաթ» լաբորատորիա, որը կնպաստի դպրոցականների ստեղծական մտածողության զարգացմանը:

Պետնախարար Ա. Բեգլարյանը կարևորեց «Արմաթ» լաբորատորիաների ցանցի ընդլայնումը՝ շեշտադրելով կառավարության պատրաստակամությունը նպաստելու նմանօրինակ կրթական ծրագրերի կյանքի կոչմանը: Այսօրվա դրությամբ Արցախում գործում է 22 «Արմաթ» լաբորատորիա:

ՄԻՋԱԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՐՃԱԽԻ ԱՌԱՋԻՆ ՄԵՂԱՆԿԻՐԸ



Միջազգային օլիմպիադայի երկար սպասված մեղալը վերջապես եկավ Արցախ: Այն բերեց Մարտունու հ. 1 միջնակարգ-հոսքային դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Գևորգ Ավանեսյանը «Կենսաբանություն» առարկայից:

Արցախից դպրոցականը, այս տարի ՀՀ օլիմպիադայի եզրափակիչ փուլում գրանցելով ամենաբարձր միավորը, իրավունք նվաճեց մասնակցել «Կենսաբանություն» առարկայի 32-րդ միջազգային օլիմպիադային Հայաստանից և երեք դպրոցականների հետ: Օլիմպիադան, որի կազմակերպիչ երկիրը Պորտուգալիան էր, առցանց ձևաչափով հուլիսի 18-23-ը անցկացվել է Երևանի հ. 118 ավագ դպրոցում երկու փուլով՝ փորձարարական և տեսական, որին ընդհանուր մասնակցել է 304 աշակերտ 76 երկրներից: Հայաստանի թիմը՝ ի դեմս Գևորգ Ավանեսյանի, նվաճել է մեկ արծաթե մեդալ: Նշենք, որ անցյալ տարի թիմը, որի կազ-

մում նաև Գևորգն էր, նվաճել էր մեկ բրոնզե մեդալ:

Մեր դպրոցականի խոշոր ձեռքբերումը լայն արձագանք է գտել համացանցում: «Արցախի կրթական համակարգն արձանագրել է մեծ հաղթանակ: Մարտունու հ. 1 միջնակարգ դպրոցի աշակերտ Գևորգ Ավանեսյանը միջազգային օլիմպիադայում նվաճել է արծաթե մեդալ: Արցախի կրթական համակարգը մրցունակ է», - ֆեյսբուքում այսպիսի գրառում է արել ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը:

«Գևորգի նվաճումը որքան ուրախալի, նույնքան էլ անակնկալ չէր. մենք սպասում էինք նրա մեդալին: Ամեն անգամ օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքներն ամփոփելիս մրցանակաբաշխության ժամանակ նրան հանձնելով առաջին կարգի դիպլոմը՝ մենք այս բարենադրանքը և ցանկությունն էինք հայտնում. սպասում ենք միջազգային օլիմպիադայի թոմեդալին: Եվ սա հիմքից զուրկ երազանք չէր»,- մեզ հետ զրույցում ասաց փոխնախարար Միքայել Համբարձումյանը:

Գևորգը 8-րդ դասարանից մասնակցում է առարկայական օլիմպիադաներին, սկզբում՝ հայոց և օտար լեզուներից: Եվ հաջողություններ է ունեցել: Իսկ 10-րդ դասարանից սկսած, երբ ընտրեց բնագիտամաթեմատիկական հոսքի քիմիա-կենսաբանություն ենթահոսքը, խորացավ այս առարկաների մեջ: Այդքա-

նով հանդերձ, մյուս առարկաների նկատմամբ նրա հետաքրքրությունը չնվազեց: Ի տարբերություն իր շատ հասակակիցների, որոնք երկու կամ երեք առարկա ընտրելով՝ անտեսում են դպրոցական մյուս առարկաները, համարելով, որ դա իրենց պետք չէ, Գևորգը, հակառակը, այն կարծիքին է, որ լիարժեք մասնագետ, լայն աշխարհայացք ունեցող մարդ դառնալու համար պետք է տիրապետել բոլոր առարկաներին, իսկ նախընտրածի մեջ՝ խորանալ: Անշուշտ, դրանում մեծ է ուսուցչի դերը: Գևորգը երախտագիտությամբ է արտահայտվում կենսաբանության ուսուցչուհի Ռիտա Եսայանի մասին, որն իր նվիրական գործն է անում դպրոցում, ինչպես նաև՝ քիմիայի և մյուս առարկաների ուսուցիչների: Մարտունու հ. 1 դպրոցն այս տարի մեկ այլ խոշոր հաղթանակ էլ է ունեցել. Հայաստանում անցկացված Պատանի քիմիկոսների միջազգային մրցաշարում Մարտունու «Սոնթեպերդ» թիմը, որի ավագն էր Գևորգը, գրավել է առաջին տեղը և արժանացել գավաթի:

Գևորգ Ավանեսյանի համար հաղթանակը գերազույն նպատակ չէ, այլ միջոց՝ իր համար ավելի բարձր նշանող սահմանելու, ուժերը փորձելու, չիսանելու դեպքում՝ չիսահատվելու, շարունակելու և առավելագույնին հասնելու: Նա համոզված է, որ այդ սկզբունքով աշխատելը ցանկալի արդյունք կտա: Իսկ

դրանում մեծ դեր ունի ինքնուսուցումը: Նրա ուսուցիչները, ԱՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատուները, Կենսաբանության միջազգային օլիմպիադայի Հայաստանի թիմի ղեկավար՝ ԵՊՀ-ից Գայանե Ղուկասյանը հաստատում են Գևորգ Ավանեսյանի նպատակասուլցությունը, աշխատասիրությունը:

Մարտունու հ. 1 դպրոցի տաղանդաշատ շրջանավարտն այս տարի ընդունվել է Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան: Միջակությունը չսիրող պատանին, համոզված ենք, կփայլի նաև բժշկագիտության մեջ, և նրա անունը լսելու դեռ շատ առիթներ կունենանք:

Արցախի հզորացման ու աշխարհին ճանաչելի դառնալու ամենակարևոր ուղին կրթությանն է: Մեր հողը չի դադարել տաղանդներ ծնելուց: Պարզապես պետք է համապատասխան միջավայր ձևավորել՝ նրանց ի հայտ բերելու: Նմանների նկատմամբ առանձնահատուկ պետական քաղաքականությունը, անշուշտ, կնպաստի նրանց ներուժն ի շահ մեր երկրի զարգացման օգտագործելուն:

Շնորհավորում ենք Մարտունու հ. 1 դպրոցի կուլեկտիվին՝ տաղանդաշատ շրջանավարտ թողարկելու կապակցությամբ: Գևորգ Ավանեսյանի բացած ճանապարհը թող բանուկ լինի մեր շատ դպրոցականների համար:

Ս. ԽԱԶՏՐՅԱՆ

ԸՆԹԱՅԸ

ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂ, ՈՂՋՈՒՅՆ, ԴՊՐՈՎ

Մանկապարտեզն այն հիմնական օղակն է, որտեղ սկզբնապես կրթվում ու դաստիարակվում է երեխան:

Հունիսի 29-ին Մարտունու շրջանի Սիմոն Սողոմոնյանի անվան մանկապարտեզում կայացավ հանդես: Ավագ «Թիթեռ» խմբի 24 սաները դաստիարակ Լարա Հովսեփյանի ուղեկցությամբ հրաժեշտ էին տալիս հարազատ կրթօջախին:

Միջոցառմանը ներկա էին Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Միհրան Ջիվանյանը, բաժնի մասնագետ Անուշ Հովսեփյանը, ծնողներ, հյուրեր:

Մանկապարտեզի տնօրեն Լիլյա Ասրյանը, զսպելով հուզմունքը, հանդես եկավ բացման խոսքով: «Մեր ունեցած կրկնակի դառնություններից հետո մենք նորից ուժ գտանք և մեր կրթօջախի դռները բացեցինք մեր սաների առաջ: Այս ամենի համար եկեք գլուխ խոնարհենք մեր հերոս տղաների առաջ և ասենք: «Ձեզ բացակա չենք դնի»: Մեր փոքրիկները, իրենց առաջին քայլերն սկսելով իրենց մանկության օրրանից, կրթվել, դաստիարակվել են և պատրաստ են բավարար գիտելիքներով մտել դպրոց: Մաղթում են բարի ճանապարհ, պայծառ ու լուսավոր ապագա և ժպիտներով լի մանկություն»:

Հրաժեշտն իրոք որ գունագեղ էր, գեղե-



ցիկ, ուրախ երգ ու պարով, ծիծաղով, այնպիսին, ինչպիսին մանկությունն ինքն է: Տոնականորեն զարդարված դահլիճում շարքով կանգնած մեր փոքրիկները փայլուն էին իրենց գեղեցկությամբ: Նրանք իրենց հայրենասիրական արտասանություններով, ուրախ երգերով, հեքիաթային երազանքներով, պարային ունակություններով, բեմական ներկայացումներով հիացրին բոլորին: Երեխաները ելույթներով շնորհակալության խոսքեր հղեցին համեստ, բա-

հիմաց, հոգատար դաստիարակ Լարա Հովսեփյանին: Միաժամանակ ասեմ, որ նա միշտ օրինակ է հանդիսացել մյուս շրջանների և մեր մանկապարտեզների դաստիարակների համար: Նրա վարած պարապմունքները միշտ արժանացել են լավագույն գնահատականի: Շրջվարչակազմի ուղեկցությամբ պարզապես է պատվոգրերով ու նվերներով:

Փոքրիկ Նախշուն բացին պարեց ավանդական պարը: Նրա շարժումներն անքերի էին:

Բեմադրեցին «Անբան Հունի» հեքիաթը: Փոքրիկ դերասանները

կատարյալ էին իրենց դերերում: Շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսքով հանդես եկավ ԿՍ բաժնի վարիչ Մ. Ջիվանյանը: «Շնորհակալություն մանկապարտեզի տնօրինությանը և ողջ մանկապարտեզին՝ ձեր անմնացորդ նվիրումի և ամենայն պատասխանատվությամբ կատարած աշխատանքի, մեր երեխաներին հայեցի, ազգային ավանդույթներով դաստիարակելու համար»:

Ծնողների անունից սրտի խոսք ասաց եվա Ասրյանը: «Շնորհակալ ենք մանկապարտեզի ողջ կոլեկտիվին, առանձնապես տիկին Լ. Ասրյանին, դաստիարակ Լ. Հովսեփյանին, որոնք, ջանք ու եռանդ չխնայելով, անմնացորդ նվիրումով դաստիարակել են մեր երեխաներին: Թող զարման թարմությամբ լցվի ձեր ամեն օրը, ուժ ու եռանդ ձեր մտքի թռիչքին»:

Միջոցառման ավարտին ավանդական կողպեքը երեխաները ամրացրին մանկապարտեզի պարսպին:

Հուզված, մի քիչ արդեն մեծացած երեխաները հրաժեշտ տվին մանկապարտեզին ու ճանապարհվեցին դեպի դպրոցական կյանք՝ առայժմ չզիտակցելով, թե ինչ թողեցին ետևում:

Անուշ Հովսեփյան Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի մասնագետ



ԴՊՐՈՎ՝ ԴԱՅՔԱՐԻ ԴԱՐԲԵՆՈՅ, ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԴՐՈՇԱԿԱԿԻՐ

Հարավ-Աֆրիկյան Հանրապետության Ստելենբոսկի համալսարանի մուտքի մոտ ամրացված է հետևյալ հաղորդագրությունը: «Ցանկացած ժողովրդի ոչնչացմանը համար պետք չեն ատոմային ռուսեր կամ հեռահար հրթիռներ: Պահանջվում է միայն նվազեցնել կրթության որակը և մասնակիցներին խաբել ու կեղծել քննության արդյունքները: Հիվանդները մահանում են մեծ թվով, շենքերը փլվում են մեծ ինժեներների ձեռքից, փողը կորչում է մեծ տնտեսագետների, հաշվապահների ձեռքից, ճշմարտությունը խեղդվում է մեծ իրավաբանների, դատավորների ձեռքից: Կրթության ճգնաժամը ազգի ճգնաժամն է»:

Այսօր մենք, անկասկած, հայտնվել ենք համապարփակ ճգնաժամի մեջ բոլոր բնագավառներում: Կրթական համակարգն էլ անմասն չէ այդ ճգնաժամից: Ուսուցիչի անհրաժեշտ է խորհել ժամ առաջ ուղիներ փնտրել մեր երեքմեկի փառքը վերականգնելու համար, և առաջին հերթին պետք է սկսել կրթության ոլորտից՝ ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման ճանապարհով: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու և սովորեցնելու պրոցեսը կանոնակարգելու նպատակով ներդրվել են առարկայական պետական չափորոշիչներ: Պրակտիկան ցույց է տալիս, որ չափորոշիչների կիրառումն էլ չի ապահովում բոլոր սովորողների կողմից ծրագրային նյութի գոնե նվազագույն ծավալի լիարժեք յուրացում: Մի պահ թվում է, թե ինչ-որ անհամաձայնություն կա տվյալ դեպքում պետական ծրագրերի և այդ ծրագրերը կյանքի կոչելու միջոցների՝ առարկայական չափորոշիչների մակարդակով: մի կողմից՝ դասագրքեր և նրանց լրացնող այլ միջոցներ (աշխատանքային տետրեր, ներդիրներ, օժանդակ գրականություն, պատրաստի պատասխաններ և այլն), մյուս կողմից՝ ուսուցիչներ, որոնք ձեռքի տակ ունեն այդ բոլորը, գումարած նաև՝ աշխատանքային փորձ, ծրագրային նյութը մատուցելու հնարավորություններ, կարողություններ, ծրագրային նյութի մատուցման զանազան մեթոդներ ու ձևեր: Սակայն չափորոշիչներով ներկայացվող պահանջները և ուսուցչի մոտեցումներն այդ չափորոշիչները կյանքի կոչելու՝ շատ դեպքերում չեն համապատասխանում: Եվ սովորողների կողմից ծրագրային նյութի նվազագույն յուրացումն իր հետ բերում է սովորել չկարողանալը, անկարողունակ լինելը, թերզարգացածության մակարդակ ունենալը ու այլ պատճառաբանություններ: Այս բոլորը սովորողը կարող է լսել նաև ուսուցչից հենց դասապարտեզից, և նրա մոտ ի հայտ է գալիս

անվտանգության զգացում սեփական անձի, ինչու էլ, կրթական համակարգի, դպրոցի, մանկավարժների հանդեպ: Իրավիճակը շտկելու համար, ինչ խոսք, և ծրագրերը, և չափորոշիչները, և դասագրքերը փոփոխման կարիք ունեն, բայց առավել ևս վերափոխվելու, վերապատրաստվելու կարիք ունեն ուսուցիչները և այդ ողջ համակարգը վերահսկելու միջոցներն ու մեթոդները: Ասել է թե՛ ուսուցիչը պետք է վերանայի իր ուսումնական գործունեությունը, իր աշխատանքը կազմակերպի նոր մոտեցումներով, որի գաղափարական հենքն այն է, որ ուսումնառությունը պասիվ ընդօրինակման գործընթաց չէ, այլ բավականին ակտիվ ստեղծագործական, նորամուծությունների կիրառման, նոր գիտելիքների ձեռքբերման բավականին բարդ գործընթաց է: Այսօր քան երբևէ մենք պետք է արմատական փոփոխություններ մտցնեք կրթության ոլորտում, հատկապես բովանդակային բարեփոխումներ: Այս փոփոխություններ կրողը պետք է լինի հենց ուսուցիչը՝ աշխատանքին ստեղծագործական մոտեցման, նորի մշտական որոնման, անընդհատ կատարելագործման, հանրակրթական պետական չափորոշիչների սահմանած պահանջների ու գործառնությունների կենսագործման ճանապարհով: «Ուսուցիչը ոչ միայն ուսուցիչ է, այլ նաև սովորող աշակերտ: Նա իր աշակերտներին, ժողովրդին տալիս է իր եռանդը, ավյունը, այն ամենը, ինչ արժեքավոր է իր մեջ: Բայց եթե այսօր, վաղը, մյուս օրը դուք տալու լինեք այն ամենը, ինչ որ ունեք և ընդամենը, նորից ու նորից չլրացնեք ձեր գիտելիքները, ուժերը, եռանդը, ձեզ մոտ ոչինչ չի մնա: Ուսուցիչը մի կողմից տալիս է, իսկ մյուս կողմից, որպես սպունգ իր մեջ ներծծելով վերցնում է ժողովրդից, կյանքից, գիտությունից ամեն լավ բան ու այդ լավը նորից տալիս է երեխաներին»,- ուսուցչի գործունեությունը այսպես է բնութագրել Մ.Բ. Կալիսինը:

Ըստ չափորոշիչների տվյալ թեման յուրացնելու համար ուսուցիչն իր ամենօրյա աշխատանքի հիմքում պետք է նպատակ դնի ժամանակին բացահայտել սովորողների մտավոր ներուժը, պայմաններ ստեղծի նրանց անհատականության զարգացման համար, ինչը և կնպաստի խթանելու երեխայի բնականոն զարգացումը: Նույն այդ ճանապարհին ուսուցիչները պետք է ձգտեն տարբերել, բացահայտել ու նաև խթանել երեխաների յուրահատկությունները: դա երեխայի ներդաշնակ զարգացումն ապահովելուց գալիս լավ հիմքերի վրա կդնի ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները: Նույն այդ հարաբերությունները զարգացնելու և ի նպաստ երեխայի օգտագոր-

ծելու համար նաև անհրաժեշտ է ներթափանցել երեխայի ներաշխարհի ու ընդունել նրան այնպես, ինչպես նա կա:

Բնականաբար, քիչ չեն երեխաները, ովքեր առանց վարանելու պնդում են, որ այս կամ այն առարկան իր հետաքրքրությունների շրջանակում չէ, և իր նախընտրած մասնագիտության մեջ այն էական դեր չունի: Ինչպես վարվել մեծ պարագայում, երբ հանրակրթությունն առաջնորդվում է ողջ հասարակության շահերով, նաև պետության ու ազգի ռազմավարությանը՝ ելնելով կազմված ծրագրերից, չափորոշիչներից, դասագրքերից և այլն: Ստացվում է, որ կրթությունն անհատի նախասիրություններն այնքան էլ չեն համապատասխանում հասարակության հետ: Արդյո՞ք ժամանակ չէ, որ կրթությունը համապատասխանեցվի ամեն մի սովորողի հետաքրքրություններին ու պահանջներին: Չպետք է մոռանալ, որ այն հենց ուղղված կլինի նաև սովորողների ներուժի բացահայտմանն ու նրանց ինքնադրսևորմանը, նրանց անհատականության զարգացմանը, իսկ դա կնպաստի սեփական յուրահատկությունների արտահայտելու հնարավորության ստեղծմանը: Այդ հարցի մասնակի լուծմանը կնպաստի այն, երբ ուսուցիչն ընդունի ու առաջնորդվի վերջ նշած նախասիրություններով: Որպեսզի երեխայի անհատականությունը ձևավորվի ու զարգանա, պետք է օգնել նրան, որ կարողանա ճիշտ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, հաղորդակցվել շրջապատի (նաև՝ տարիքով մեծերի) հետ՝ ստեղծելով ներդաշնակ հարաբերություններ, ընդունել որոշումներ և պատասխանատվություն կրի այդ որոշումների համար, կարողանա զանազան գործնական աշխատանքներում ցուցաբերել ստեղծագործական մոտեցում, գիտակցի իր ազատ ու անկաշակնոր լինելը ամենատարբեր հարցերում, նույնիսկ սովորելու իր հարմար եղանակն ընտրելիս, մասնագիտություն ընտրելիս:

Յուրաքանչյուր ուսուցիչ իր բնագավառում պետք է փորձի դառնալ նորարար, ժամանակի պահանջներին համահունչ, մանկավարժական գիտության նվաճումները յուրացնելով, ոլորտի փոփոխություններն ու նորամուծություններն ուսումնասիրելով, ինչպես նաև առանձին անհատների ու կոլեկտիվների առաջավոր փորձն ուսումնասիրելով:

Ի դեպ, ուսուցիչների կատարելագործման և վերապատրաստման (վերապատրաստում՝ բառիս բուն իմաստով) մարզային ինստիտուտն առաջավոր ուսուցիչների աշխատանքային փորձի ուսումնասիրման ու տարածման, նրանց վերապատրաստման գործուն

զգալի աշխատանք էր կատարում: Համոզված են, կուտակված առեղծված մանկավարժական փորձ կա կրթական համակարգում, բայց այն ի մի չի բերվում, չի ուսումնասիրվում: Գուցե շատերն այն կարծիքն են, թե դրա կարիքը չկա, ինչպես դժվարությամբ են համոզվում դասախոսը սեղմագրելու և անհրաժեշտության դեպքում դրանից օգտվելու գործին՝ պատճառաբանելով: «Քանի տարի դասավանդում են այդ նույնը, սեղմագրելու ի՞նչ կարիք կա»: Հենց այստեղ է, որ ի չիք է դառնում թեմայի դասավանդման ստեղծագործական մոտեցումը, արդիականության հետ այն կապելը: Վերջապես չէ՞ որ աշակերտներն էլ են դասարանից դասարան փոխադրվում, և յուրաքանչյուր նոր սերնդի հետ նոր մոտեցում պետք է ունենալ՝ ելնելով սովորողների կարողություններից, կրթական աստիճանից, գիտելիքների ձեռքբերման մակարդակից: Հազիվ թե մեկ ուսուցիչ փորձի գնահատել և ուսումնասիրել իր աշխատանքային ընկերոջ փորձը, եթե անզամ համոզված լինի, որ վերջինս իրոք շոշափելի հաջողություններ է արձանագրել: Ստացվում է, որ առաջավոր փորձն ուսումնասիրող չունեն: Այնինչ այդ գործը պետք է հանձնարարվի դպրոցի տնօրեններին, ուսումնական գծով փոխտնօրեններին, որոնցից շատ անզամ պահանջում են որոշակի քանակով դասախոսներ, և եթե այդ դասախոսները քանակով ավելին են, քան պահանջվում է պլանով, ապա գերազանց է, իսկ եթե շատ քիչ են նախատեսվածից, ուրեմն անբավարար է: Իսկ որակի մասին խոսելն ավելորդ է: Թվում է, թե այդ գործում կարելի է ներառել ԿԿՄՍ նախարարության կրթության պետական տեսչության անդամներին, որոնք և բազմափորձ են, և իրենց գործին նվիրյալներ:

Միայն չեն լինի, եթե պնդեն, որ մեր ժողովուրդը երբևիցե այսքան «խճճված» վիճակում չի հայտնվել: Ողջ հասարակությունը անորոշության մեջ է: Հայտնվել ենք այնպիսի մարտահրավերների կիզակետում, որոնց լուծման բանալիներից և ոչ մեկն էլ մեր ձեռքում չէ: Բայց կա, այնուամենայնիվ, ճանապարհ, և դա, նախ և առաջ, կրթական համակարգի արմատական բարեփոխումն է, որը կբացահայտի մեր ներուժը, այն կհանի փլատակներից և ուղիներ կմատնանշի երկրի տնտեսական, ռազմական հզորության հասնելու համար:

Համոզված եղեք, մեր փրկության միակ բանալին ուսուցիչ ձեռքերում է:

ՆԵՏԱԳԻՑ

ԳՆԱՑ՝ ՑԱԿԸ ՍՐՏՈՒՄ...

Մեր շարքերից մի մարտնչող մտավորական էլ պակասեց: Մինչև վերջ իր պայքարը տարավ գեները՝ գրիչը, ձեռքին: Շտապում էր սիրելի «Լուսարար»-ի միջոցով պատմությանը պահ տալ Արցախյան շարժման տարիներին արված օրագրային գրառումները՝ համեմատության մեջ ներկայացնելով նաև այսօրվա իրողությունները: Ուզում էր այդ ձևով դասեր թողնել սերունդներին՝ չկրկնելու համար պատմական սխալները: Անտարբեր չէր հասարակական, քաղաքական, կրթական և մյուս ասպարեզներում կատարվող երևույթների նկատմամբ և իր կարծիքն էր հայտնում:

Մեծ ցավ էր ապրում մեր հայրենիքի այսօրվա ճակատագրի համար, ու այդ ցավին նրա սիրտը չդիմացավ: Բայց վստահ էր, որ ազգի ողջախոհությունն ի վերջո կհաղթանակի: Մահացավ այն հերոսների պես, որոնց հատուկ չէ ծնկի գալ:

Գնաց՝ փարվելու հայրենի հողին, որ ցողված է հազարավոր հայորդիների, այդ թվում՝ իր սաների արյամբ, միացավ նրանց հավերժական ներկայությանը:

Թող հոգիդ անխռով լինի Երկնքի արքայությունում, Ուսուցիչ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՌԱՆՅ՝ ԳՐԱՎԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ ԴԱՎԱՐՈՒՄ Ե ՈՒՍՈՒՑԻՉ ԼԻՆԵՒՈՒՅ

Ծոռնուհին՝ Օլեսյան, այսօր երկու թանկարժեք գրքեր բերեց, ուրախացած ինձ նվիրեց՝ ասելով. «Պատիվ, թույլ տուր դնեմ քո գրադարանում», իսկ ես պատասխանեցի. «Իմ խելով բավիկ, ինչո՞ւ իմ գրադարանում, ինքը պիտի ունենաս գրադարան, և այդ գրքերը թող քո գրադարանի առաջին բնակիչները լինեն»: Այդ թանկարժեք գրքերն են՝ «Իմ առաջին Աստվածաշունչը» և «Իմ առաջին պատկերագրող Աստվածաշունչը»: Այսքանից հետո ուրախացած՝ ես պարտավորվեցի Օլեսյանի գրադարանի համար ձեռք բերել մի պահարան և դնել իմ գրադարանի կողքին: Թող այս պահարանը օրեցօր մեծանա ու տարիներով նոր գրքեր ընդունի, հարստանա: Իսկ ծոռներս էլ, որոնց թիվը 15-ն է, հավասարապես օգտվեն այդ գրադարանից, նորանոր գիտելիքների տեր դառնան ու ձեռք մեկնեն նաև իմ գրադարանին, որտեղ իրենց հետաքրքրող շատ հարցերի պատասխան կգտնեն: Իմ սերունդը Աստվածաշունչ չի տեսել և այդ սուրբ գրքի էջերը չի բացել: Մենք որպես աթեիստներ ենք մեծացել ու գործել, իսկ այսօրվա սերունդը հենց Աստվածաշունչով է շունչ քաշում, և կարծում են, որ նա ավելի աստվածասեր ու հայրենասեր կլինի, քան մենք: Ուրախ եմ նաև, որ այսօրվա դասագրքերն էլ են քարոզում գրադարան ունենալ, որտեղ ընթերցում ենք:

Կնոջը՝ Թամարային. մրցում էինք մասնագիտական գրքեր գնելով ու օգտագործելով, ես՝ պատմությունից, ինքը՝ քիմիա-կենսաբանությունից: Այնուհետև մեզ հետ սկսեցին մրցել մեր 4 դուստրերը՝ Մարիետան, Նինելը, Մարգարիտան և Սիլվան: Մարիետան՝ մոր նման քիմիա-կենսաբանություն, Նինելը՝ ֆիզիկա, մաթեմատիկա, Մարգարիտան՝ բժշկական գրականություն: Ի միջի այլոց ասեմ, որ Մարգարիտան երբ սովորում էր Բաքվի բժշկական ինստիտուտում, ես պայմանավորվել էի այնտեղ մի հայ գրավաճառի հետ, որը Շմիդտի փողոցի վրա հորաքոջ տան նրբանցքի մոտ էր գործ վաճառում, որ երբ նոր գրքեր ստանա, անպայման հասցնի աղջկա: Եվ աղջկա մասնագիտական գրադարանն օրեցօր հարստանում էր: Մենք «տարօրինակ» մարդիկ էինք, «տարօրինակ» ընտանիք, իհարկե, անչափ երջանիկ. ստանում էինք ավելի քան 30 ամուն թերթ և ամսագիր, մասնագիտական սերիաներ, կապ էի պահում Մոսկվայի Агрепловка կայանի հետ, որը պարբերաբար փոստով ուղարկում էր նոր գրքեր, քարտեզներ, դիաֆիլմեր և այլն: Տանը պատի թերթ էինք լույս ընծայում, գլխավոր խմբագիրը՝ ես, իսկ քարտուղարուհին՝ Նինելս, որն ամենաբարեխիղճն էր և ուներ գեղեցիկ, վայելուչ ձեռագիր ու նկարելու շնորհք: Ու շատ գեղեցիկ ձևավորվել էր ընտանեկան պատի թերթը, որը կոչվում էր «Արտուսիկ»: Աղջիկներս էլ էին ստեղծագործում, և պատի թերթում հրատարակում էինք. Մարգարիտան, Նինելն և Սիլվան տառնավորներ էին գրում, իսկ Մարիետան, որ 5-րդ դասարանում էր սովորում, խմբագրում էր: Դիզում էմ, իր 3 թույրերի գրածը տարել էր ռադիոյի խմբագրություն, արժանահիշատակ Մաքսիմ Դովիանիայանին ներկայացրել, որը մեծ սիրով էթեր էր արձակել ու նամակով շնորհավորել ինձ՝ ասելով. «Տաղանդավոր երեխաներ ունես, շարունակիր»: Բայց տարիները եկան, գնացին: Երեխաներիս մասնկաթյամբ բեղմնավոր աշխատանքը մոռացանք, իսկ որ գրադարանն հարստանում էր և, որպես կենդանի մարմին, նոր շունչ էր քաշում, ուրախանում էինք:

դարան, որը նույնպես «գերեվարվել» է Շուշիում, ու բալետ գրում է, որ իր կորցրած գրքերի հետ Շուշիում թողած տունն ու տեղ, մոր հետ ապրում է Ստեփանակերտում, այստեղ-այնտեղ: «Որքա՞ն ուրախ կլինեմ, եթե մեզ տան մի փոքրիկ տեղ, որը կլինի մեր վերջերի բուժման տեղը»,- այսպես է գրում ծոռնուհին:

Առանց գրադարանի ուսուցիչը աղքատ պիտի զգա իրեն: Մենք, բացի նրանից, որ ունեցել ենք և ունենք անձնական գրադարաններ, քաղաքում ունեցել ենք նաև Ուսուցչի տուն, որն ունեցել է հարուստ գրադարան, որից օգտվել ենք շատերս: Մարգարիտայի քաժմում էլ գրադարան կար, որը ղեկավարում էր այն ժամանակվա մեր լավագույն ուսուցիչ-գիտնականներից մեկը՝ հանձնիս բանասիրական գիտությունների թեկնածու Կարո Դավթյանի:

Ես իմ կյանքի մայրամուտն եմ ապրում արդեն, 30 տարեց ավել է, ինչ թոշակառու եմ: Փաստորեն ինչպես էին Դոնոմոն պետական կարևոր ծեր մարդկանց տանում էին Տիբր գետում գտնվող Եսկալապե կոչված վայրը՝ իբր «կազդուրվելու», բայց նրանց այնտեղ դառնալ մահ է սպասվել, այնպես էլ ես իմ դանդաղ մահն եմ ապրում: Ինձ շունչ տվողը միայն մամուլն է, մասնավորապես՝ «Լուսարար»-ը: Մտածում եմ ինչո՞ւ մեր թոշակառու ուսուցիչները հունենան մի անկյուն, որտեղ երբեք չեն հավաքվել, իրար տեսնել, կարծիքներ փոխանակել, նարդի, շախմատ խաղան, մրցույթների մասնակցել, մոռանալ ծերությունը: Ասա՛ք, ես իմ դարձ ապրել եմ և շնորհակալ եմ, բայց ափսոսում եմ, որ մեր թոշակառու ուսուցիչները գրկված են թոշակառու ուսուցիչների ակունքից կամ տնից. գուցե հաստիքով չկազմակերպվի, բայց կարելի է քաղաքի կենտրոնական մասում, որևէ դպրոցում մի դասասենյակ հատկացնել, կահավորել համեստ սպորտային իրերով և գրականությամբ, ստեղծել մի այլում, որտեղ կտեղավորվեն որոշ թոշակառուների նկարներ, ու կրճատ՝ նրանց կենսագրականը: Օրինակ՝ եթե 7-րդ դպրոցում այդպիսի սենյակ հատկացվեր, մեծ ուրախությամբ կծանոթանային մեր անմահ ուսուցիչներ Գաբրիել Գաբրիելյանի, Խաչիկ Դարբինյանի, Սոնյա Խասապետյանի, դասվարներ Քնարիկ Բեգլարյանի, Նինա Սարգսյանի և ուրիշ արժանավորների նկարներին ու գործունեությանը: Ի՞նչն է խանգարում: Կարծում եմ, մեր նախարարը կընդառաջի մեզ:

Մի բան էլ ասեմ: Մի երազանք էլ ունեմ: Երազում եմ, մինչև մահվանացուս կնքվել «Լուսարար»-ի մի անկյունում տեսնել «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի պատկերը, քանի որ մեր թերթն իր ավելի քան 20-ամյա կենսագրությամբ շատ բան է կատարել մեր ուսուցչական բանակի մեթոդաբանական և մասնագիտական փորձը կատարելագործելու հարցում: «Լուսարար»-ը մեր ԿԳՄՍ նախարարության ու նրա բանակի իսկական հայելին է, որով պարզ տեսնում ենք մեր դպրոցական կյանքը: Այնպես որ, խնդրում եմ մեր նախարարությանը այժմվանից հող նախապատրաստել նոր ուսումնական «Լուսարար»-ի վրա տեսնելու «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի պատկերը: Միևնույն է, ես թոշակառու ուսուցիչների անունից այդ հարցով դիմելու եմ հանրապետության նախագահին ու խնդրելու եմ: Այնպես որ, «Լուսարար»-ի հետ մեր ուսուցչական բանակը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու և հպարտությամբ կկրի այդ շքանշանը:

Մառլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, մշակույթի վաստակավոր աշխատող, անհպական թոշակառու

ՄԱՌԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ



ԱՅ ԿԳՄՍ նախարարությունը խորը վշտով հայտնում է մանկավարժ-պատմաբան, հողվածագիր, Արցախյան շարժման տարեգիր Մառլեն Շահնազարյանի մահվան մասին:

Մառլեն Շահնազարյանը ծնվել է 1929թ. հունիսի 16-ին Դարբասի շրջանի Ազոխ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի յոթնամյա դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է

Շուշիի մանկավարժական ուսումնարանում, որն ավարտել է 1950թ. և նույն թվականի սեպտեմբերից, որպես դասավար, աշխատանքի անցել շրջանի Դոլանլարի (այժմ՝ Արևշատ) յոթնամյա դպրոցում: 1951-1954 թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում:

Որպես մանկավարժ՝ Մ. Շահնազարյանն անցել է կրթական բոլոր աստիճաններով: 1954-ից մինչև 1963 թվականը դասավանդել է Բալուջայի (Այգեստան), Մեթիշենի (Լուսածոր) և Խրամորթի դպրոցների տարրական դասարաններում: 1962-ին ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1963թ. նշանակվել է Ասկերանի շրջանի Քարազուլիխի 8-ամյա դպրոցի տնօրեն, որտեղ աշխատել է 7 ուսումնական տարի: 1970թ. ընտանիքը Քարազուլիխից տեղափոխվել է Ստեփանակերտ, և նա աշխատանքի է անցել մարզկենտրոնի թիվ 21 միջնակարգ պրոֆեսիոնալ-մարտնչական տարրական աշխատանքների գծով փոխտնօրեն:

Սովորողների ինտերնացիոնալ և հայրենասիրական դաստիարակությունը բարձր հիմքերի վրա դնելու արդյունք էր, որ նախածեղեն «Շրջիկ-ալբոմ» նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների թիվ 21 պրոֆեսիոնալ-մարտնչների հետ՝ նրանց հասցնելով ԼՂԻՄ-ի վերաբերյալ տեղեկատվություններ, հայալեզու լրագրեր ու ամսագրեր, մեր երկրամասը ներկայացնող լուսանկարներ:

1977-1978 ուսումնական տարում հեթոսփոխային միջնակարգ դպրոցի տնօրեն էր, որտեղ 700-ից ավելի սովորող կար: 1978-1992թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 9 միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմասվար, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով փոխտնօրեն, պատմության ուսուցիչ:

1995-2008 թթ. Խրամորթի և Իվանյանի միջնակարգ դպրոցներում դասավանդել է պատմություն և իրավունք:

Իր առարկան հետաքրքիր մատուցելուց զատ՝ կարևորում էր արտադպրոցական դաստիարակությունը: Ստեղծել է «Դեռաքրքիր հանդիպումների ակունք» (ՀՀԱ), որի պատվավոր հյուրերն են եղել գրողներ, ժողովրդասաններ, աշխատանքի հերոսներ, արվեստի գործիչներ և այլք:

Հարազատ քաղաքի պատմությունը հավերժացնելու նպատակով ստեղծել է «Մեր քաղաքի հուշարձանները» ալբոմը, որտեղ գետնդել է քաղաքի 12 հուշարձանների մասին մանրամասն տեղեկություններ, լուսանկարներ և դրանք կցել դասարաններին՝ խնամելու համար:

12 տարի ղեկավարել է դպրոցի «Արծիվ» աշխատանքային ճամբարը Դաշուլաղ (Աստղածաղկ) գյուղում, որի անունը դուրս էր եկել մարզի սահմաններից:

Շուրջ 10 տարի իր փորձը փոխանցել է մանկավարժական ինստիտուտի սապագա պատմաբաններին՝ դրամով իսկ նպաստելով երկրի համար մոռանազետներ պատրաստելու լուրջ գործին: Թոշակի անցնելուց հետո էլ շարունակել է գիտամանկավարժական գործունեությունը՝ աշխատելով Ասկերանի միջնակարգ դպրոցում և Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում:

Մեծ ներդրում է ունեցել պատմություն և աշխարհագրություն առարկաների թեմատիկ պլանների մշակման գործում:

Եղել է Արցախյան շարժման գաղափարակիր և ակտիվ մասնակից: Անչափ կարևորում էր մտավորականների դերը երկրի ու հասարակության զարգացման գործում՝ գտնելով, որ հեղինակավոր մտավորականները պետք է շրջեն գյուղերում, շփվեն մարդկանց հետ ու ներկայացնեն երկրի կյանքը: Պետական քաղաքականության քարոզչության համար արժանացել է «Մշակույթի վաստակավոր աշխատող» պատվավոր կոչմանը:

Եղել է աշխատանքի վետերան և անհատական թոշակառու: Նրա անունը 20-րդ դարի Արցախի 100 լավագույն ուսուցիչների ցանկում է: Ճանաչվել է 2001-2002 ուստարվա լավագույն ուսուցիչ:

2019թ. պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

2000-ից ավել թղթակցությունների և հոդվածների հեղինակ է:

Մառլեն Շահնազարյանի կինը նույնպես մանկավարժ էր: Մանկավարժության հանդեպ սերը փոխանցվել է չորս դուստրերից երկուսին:

Կյանքի մինչև վերջին պահն էլ հավատարիմ էր գրին. «Եթե ես դադարեցի թերթ կարդալ կամ հոդված գրել, իմացեք, որ այլևս չկամ»:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻՋԱՅՆԸ, ՆՐԱ ԴԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՄԱԿԱՐԳՈՒՄ

Այսօր անընդհատ փոխվում է աշխարհը, հասարակությունը ստեղծում է կոնկրետ սոցիալական նախադրյալներ՝ տնտեսական, բարոյական, գեղագիտական նորմերի առումով: Արդիականացման կամ նորարարության սկիզբն իրական հնարավորություն ստեղծեց մարդու աշխարհայացքի աստիճանական ձևավորման, արտադրանքի՝ նրա նոր գաղափարի, դերի, նշանակության, առավելությունների համար:

Քանի որ անհատը ներգրավվում է, միաձուլվում մշակութային, պատմական, ազգային, գեներացիոն արժանատիքներին, ուրեմն անընդհատ ստեղծվում են սոցիալ-տնտեսական նախապայմաններ դիզայնի դերի բարձրացման համար, այն շրջակա միջավայրին ներդաշնակեցնելու, արդիական դարձնելու համար:

Արդյունաբերական դիզայնի զարգացումը սկսվել է 20-րդ դարի 2-րդ կեսին, իսկ առաջին դիզայներները հայտնվել են Անգլիայում 18-րդ դարում: Պատմական ակնարկը վկայում է, որ արդյունաբերական դիզայնը ստեղծագործական գործունեություն է. այն ստեղծում է ֆունկցիոնալ առաջնահերթություններ ճարտարագիտության, ցանցային համագործակցության, տեխնոլոգիական փոխանցումների և վերապատրաստման ոլորտում: Այսօրվա դիզայնը որպես արվեստ աջակցում է սոցիալական առաջնահերթություններին՝ արտադրելով ներառական նորամուծություններ, որոնք բխում են հասարակության շահերից և ծառայում են նրան:

Արդյունաբերական դիզայնը ոչ միայն տեխնոլոգիաների հետ դիզայնի համադրության արվեստ է, այլև շուկայավարման գործիք:

Արդյունաբերական արտադրանքի համար դիզայնը ստեղծող մասնագետը պետք է լինի և՛ որպես նկարիչ, և՛ որպես դիզայներ, և՛ որպես տեխնոլոգ: Ի վերջո, արդյունաբերական դիզայնը պահանջում է կիրառել ստեղծագործական երևակայություն, բայց այնպես, որ վերջնական արտադրանքի տեխնոլոգիական իմաստը չխաթարվի: Ուրեմն, արդյունաբերական դիզայնը մի գործողություն է, որը համատեղում է արվեստն ու տեխնոլոգիաները: Արդյունաբերական դիզայնի նպատակն արդյունաբերական արտադրանքի ձևավորման հատկություններն են, մասնավորապես դրանց կառուցվածքային և ֆունկցիոնալ հատկությունների ու արտաքին տեսքի որոշումը: Համաձայնագրային նյութերը, դիզայ-

նի պատմությունը վկայում են, որ առաջին դիզայներները հայտնվել են Անգլիայում: Իսկ արդյունաբերական դիզայնի սահմանումը հայտնվել է 1919թ.: Այն որպես գործունեության տեսակ՝ ներառում է արվեստի, շուկայավարման և տեխնոլոգիաների տարրերը: Արդյունաբերական դիզայնը ներառում է օբյեկտների ամենալայն տեսականին՝ տնային պարագաներից մինչև բարձր տեխնոլոգիաների արտադրանք: Այս թե ինչու կյանքի զարգացման պայմաններում արդյունաբերական դիզայնը ստեղծում է ֆունկցիոնալ առաջնահերթություններ ճարտարագիտության, ցանցային համագործակցության տեխնոլոգիական փոխանցումների և վերապատրաստման ոլորտում:

Դիզայնը որպես արվեստ աջակցում է սոցիալական առաջնահերթություններին՝ արտադրելով ներառական նորամուծություններ, որոնք օգտագործվում, բխում են հասարակության շահերից: Իհարկե, պետական աջակցությունը միշտ էլ նպաստում է դիզայնի շուկայի զգալի աճին: Արդյունաբերական դիզայնը գործնականության և գեղագիտության հումանիշ է, անգամ խորհրդանիշ:

Այն ամենը, ինչ առօրյայում և գործնականում շրջապատում է մեզ, այսօր դիզայնի գաղափարի պտուղներն են: Կահույքի բոլոր տեսակները, խոհանոցային բոլոր իրերը, պարագաները, անգամ մեր պայուսակի իրերը, ամբողջ համաշխարհային ճարտարապետությունը, մեքենաշինությունը, ավտոարդյունաբերությունը: Դիզայնի ամբողջ ներթափանցումը մեր կյանքի ոլորտները հոգեբանորեն փոխեց մեզ, քանի որ դիզայնի հիմնական և առաջնահերթ խնդիրն է փոխել մարդու հոգեբանությունը, իսկ մյուս խնդիրն է ընդհանրապես փոխել կոնկրետ իրը կամ առարկան, որը շատերը չփոփոխում են:

Այս թե ինչու մասնագիտորեն տիրապետելով օրենքներին, որոնք կարող են տալ ուսումնական հաստատությունները, մարդը կարող է ներգրավվել և տիրապետել դիզայնի բոլոր օրենքներին՝ ընդլայնելով իր մտավոր ու տեխնիկական կարողությունների սահմանները: Պետք է հաշվի առնել, որ դիզայնի զարգացումը, բնականաբար, կապված է համաշխարհային արդյունաբերության աճի հետ. այն արագացրեց արդյունաբերության զարգացումը, սկսեց միաձուլվել տարբեր ոլորտների հետ, ինչպիսին է, օրինակ, մարքեթինգը կամ շուկայավարումը: Դիզայնը դարձավ արվեստի անբաժանելի մասը՝

ընդգրկելով իր մեջ օբյեկտներ ու տարրեր, որոնք նախկինում անտեսվել էին:

20-րդ դարը դիզայնի համար դարձավ բացառիկ, որով բացվում է դուռը, որի հետևում մարդկային աշխարհը և նրա շրջակա միջավայրն արդեն պատրաստ էին գեղագիտական զարգացման համար: 20-րդ դարավերջին և, առավել ևս, 21-րդ դարասկզբին արդեն առաջին դիզայներների էսթիզաներն ու նախագծերն իրենցից ներկայացնում էին բարդ կոնստրուկտորական և գեղարվեստական պրոցեսներ: Դիզայնի ներգրավումը արդյունաբերական միջավայր հատուկ նախադրյալներ ստեղծեց գեղարվեստական զանազան լուծումների համար: Հետաքրքիր է այն երկակի վիճակը, որի ընթացքում դիզայնը ու կոնստրուկտորը պետք է ստեղծեին տրամաբանական համագործակցություն, անգամ եթե նրանք համատեղ չեն աշխատել: Շատ դեպքերում դիզայնի և կոնստրուկտորի մտավոր գործունեությունը մնամկում են միմյանց: Փաստերն ապացուցում են, որ ինդուստրիալ դիզայնի բնագավառը հիմնվել է կոնստրուկտավորման մտքի վրա, և դիզայնեթական բարձրագույն գեղարվեստական ստեղծագործություններն իրենցից պահանջում են մասնագիտացում, հետագա օբյեկտի կոնստրուկտիվ առանձնահատկություններին տիրապետում: Անչափ կարևոր է բարձր գեղարվեստական արժեքը, քանի որ դիզայնեթական աշխարհը խոր գեղարվեստական բնագավառ է, որտեղ դիզայնեթական պահանջները բխում են ստեղծագործական և անհատական առանձնահատկություններից՝ բացահայտելով ընդհանուր և մասնավոր արժեքները: Այսօր քան երբևէ դիզայնը պետք է ռեալ գնահատի այն պրոբլեմները, որոնք կապված են տեխնիկական նախագծերի հետ՝ կառուցելով ամբողջ աշխատանքը, միաձուլելով դիզայնի աշխատանքը վերջնական ֆունկցիոնալ որոշման հետ:

Արդյունաբերական դիզայնի առանձնահատկությունները կախված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից, աշխարհայացքային, ազգային-մշակութային մոտիվներից: Դիզայնի դերն այսօր կախված է շուկայական հարաբերություններից, շուկայի օրենքներից և սպառողների պահանջներից: Դրա համար էլ այսօր դիզայնը ոչ միայն նկարիչ-ձևավորող է, նա նաև մեծ ֆինանսական կառուցվածքի ստեղծողն է, մասնակիցը:

Կրթության համակարգում խիստ կարևոր է այն առարկաների ուսուցումը, որոնք մեծ դեր

ունեն ժամանակակից դիզայնի զարգացման համար: Դրանք են հատկապես գծանկարը, գեղանկարը, կիրառական արվեստի պատմությունը, գծագրական երկրաչափությունը, էրգոնոմիկան, լանդշաֆտային դիզայնը, գեղարվեստական տեխնիկական խմբագրումը: Տեսական առարկաների ուսուցումը պետք է ուղղել կոնստրուկտիվ մտածողության վերահամարմանը: Արդյունաբերական դիզայնի ուսուցման նպատակը բարձրագույն դպրոցի կրթական սիստեմի ինտեգրացումն է:

Այսպիսով, արդյունաբերական դիզայնը խիստ կարևոր է ինչպես գեղարվեստաէսթետիկական, այնպես էլ շուկայական-մարքեթինգային հարաբերությունների զարգացման գործում: Արդյունաբերական դիզայնը համատեղում է արվեստն ու տեխնոլոգիաները, որոնք բխում են ժամանակակից կյանքի պահանջներից: Նրա զարգացումը նպաստում է արդյունաբերական շուկայի զգալի աճին, որը և մարդու կենսագործունեության ապահովման գրավակամն է:

Արդյունաբերական դիզայնը մասնագիտական դասընթաց է, որի ընթացքում ուսանողներն ուսումնասիրում են արվեստի պատմությունը: Սովորում են զարգացնել նոր արտադրանքի գաղափարներ, ստեղծել դրանք և խորանալ արդյունաբերական բիզնեսի բաղադրիչների մեջ: Ոչ միայն գեղեցիկ որևէ բան ստեղծել, այլև այնպես անել, որ ստեղծած այդ գեղեցիկը ներդաշնակի ժամանակի վերջին պահանջներին:

Ժամանակակից ուսանողը պետք է կարողանա աշխատել, ստեղծել և հաջող կարիերա ձեռք բերել միջազգային շուկայում: Միանգամայն ճիշտ է Բ.Ե. Կոչեգարովը, որն իր “Промышленный дизайн” գրքում բացահայտում է դիզայնի բազմաթիվ օբյեկտները, իր իսկ խոսքով՝ ասելից մինչև ինքնաթիռ:

Մասնորոն պետք է ճիշտ պատկերացում կազմի արդյունաբերական դիզայնի ծագման, զարգացման փուլերի մասին, դրանք դիտի ժամանակակից կյանքի, մարդկանց այսօրվա պահանջների համապատկերում: Այսօր քան երբևէ կարևոր է լինում «Տեղը չի վաճառվում» ասույթը, որի էությունը են պայմանավորված ժամանակակից դիզայնի խնդիրներն ու նպատակները:

Ա. ՕՅՆՅԱՆ
«Գյուրջան» կիրառական արվեստի ինստիտուտի դասախոս

Խոսք երախտագիտության

ՈՒՍՈՒՑԻՉ, ՈՒՄ ՄԵԾ ԱՈՒՔԵԼՈՒԹՅՈՒՆ Ե ՎԵՐԱՊԱՀՎԱԾ



Օրերն ինչքան գնում, այնքան կարոտով են լցվում ու քաղցրանում՝ միաժամանակ հիշեցնելով այն գեղեցիկ պահերի մասին, որ ապրել ենք մեր դպրոցական տարիներին: Ժամանակը արագընթաց գնացք է, իսկ մենք՝ ուղևոր, որ համար միշտ լուսաշող դեմքեր ենք փնտրում ողջունելու և գրուցելու համար:

Իմ սիրելի դասուցիչ՝ ճարտարի Ազատամարտիկների անվան հ. 1 միջնակարգ (հոսքային) դպրոցի հայոց պատմության ուսուցչուհի Օֆելյա Շահրամանյանի մասին խոսելիս ես պարտավոր եմ կանգնել

լավատեսության ու համարձակության ամենակերտ պատվանդանի բարձրության վրա, որից իջնելու թուլություն նա երբեք չունի: Նրա խստապահանջությունը, ինչ խոսք, անկեղծ կլինեն, կարևոր էր նաև ինձ համար՝ բնավորության մեջ փոփոխություններ կատարելու և կյանքին ու ապրելուն այլ տեսանկյունից նայելու համար: Արդարև, այդպես է:

Ընկեր Շահրամանյանը փոքրիկների առջև կանգնում է կաղնու պես հաստատուն ու աներեր, իր գործին գիտակ՝ ճկվում է եղեգի պես ու միշտ նայում է առաջ՝ հպարտորեն ուսած անցյալի քաղցր ու դառը փորձը, ապագայի հանդեպ հույսն ու հավատը: Նա նաև հոգատար մայր է, իր թոռնիկների համար սիրելի տատիկ, ընտանիքի կին, իսկ ինչ վերաբերում է կնոջ առաքելությանը ընտանիքում, կասեմ հետևյալը. շղթայի գործունեությունը ծավալվում է ամբողջականության մեջ, բայց նրա երեք օղակներից կարևորը մեջտեղին է, քանի որ առանց դրա չի լինի շղթան, կլինեն առանձին օղակներ: Կինը ընտանիքի կայացման գործում հենց այդ մեջտեղի օղակն է: Եվ այդ, նա հրաշալի հայուհի է:

Երջանիկ է լուռ, շատ անգամ էլ՝

աջքափայլն է վկայում: Երջանիկ է նաև իր աշակերտներով, պատմության դասասենյակի բարտեզներով, որ միշտ նայում ու աղոթքի մասն մրմնջում է՝ երանի ամբողջը նորից մերը լինել:

Առանց վախենալու չափազանցության մեջ մեղադրվելուց՝ պիտի ասեմ, որ նրա հաստատականությունը սովորական չէ. դա կարծես Աստուծոց տրված լինի, որը նաև լավ մասնագետ լինելու կարևոր ցանկադրիչ է՝ բնական, անխառն, նախակզբնական ու մաքրամաքուր:

Ժամանակի ու տարածության ալեբախումներում նորից է խորհրդավոր դառնում նրա հայացքը, դեմքի ծախսը, կայուն ու կուռ բնավորությամբ կերպարը, որը հիմա էլ սերունդ է կրթում՝ հայրենասիրություն, ազգապահպանություն սերմանելով: Ուսուցչուհիս հայի գեներտիկ հավատի տեր մարդ է և ոչ միայն լավ մանկավարժ է, այլ նաև հրաշալի խորհրդատու, ընկեր, գրուցակից: Մարդը արժեք է բարոյականության, կրթվածությամբ, աշխատանքով:

Անքննարկելի է ընկեր Շահրամանյանի համոզմունքը. հայերս մեր արարիչն ենք մեր հայրահաստատուններով պիտի գտնեմք

եկող սերունդներին, որ դառնան քաջարի զինվորներ և ծնկի բերեն թշնամուն՝ վերականգնելով մեր պատմության դասասենյակի գրապատկերում համարաբարձ բարտեզի ամբողջականությունը: Ցավոք, բայց և այսօր կարևոր երազանք է մեզ համար նշած:

Յիրավի, ինքնաստիպ է ուսուցչուհիս՝ իր խոսքով, մտածածով, գործով, քայլերով: Նրա հոգու համապատկերում համարաբարձ ազատություն է, որտեղ լույսը գերազանցում է: Ընկեր Շահրամանյանը լուսավոր հետազոծ է թողնում ոչ միայն նորաթուխ մանկավարժների, այլև աշակերտների համար: «Ուսուցչին այն մարդն է, որը դժվար բաները դարձնում է հեշտ», - այսպիսի մի ճշմարտություն է ժամանակին ասել Ռալֆ Էմերսոնը: Այս տողերը կարդալիս միշտ ընկեր Շահրամանյանն է աչքերիս առաջ հայտնվում, որովհետև դա այդպես է. նա ամեն դժվար բան մեզ համար հեշտ էր դարձնում՝ մշտապես պայքարելով, պահանջելով, կրթելով, թև ու թիկունք կանգնելով բոլորիս:

Նրա կերպարը, խոսքը, շարժումը, հազուկապալ միշտ հիացնում էին մեր դասարանին: Նրան հաջողվում է սեր արթնացնել պատ-

մության, ակնածանք՝ սովորելու հանդեպ... Նա կարողանում է սովորեցնել, իսկ դա մեծ արվեստ է, որ ամեն մեկին տրված չէ: Այո, ուսուցչի մասնագիտությունը աշխարհում ամենապատվաբերն է: Նա էությանը է ուսուցիչ:

Մեր յուրաքանչյուրիս կյանքը բաժանված է երկու փուլի՝ պատերազմից առաջ և հետո: Լավատես, կյանքը սիրող, նրա ամեն ակնթարթվումը մարդն անգամ այս պահին իրեն լիաթոք կայացած չի զգում ոչ մի հարթակում: Բոլորիս ներսում տրոփում են չապրած գարուններ, հայրենասեր աչքեր, որոնք հաղթանակի ակնկալիքով խառնվեցին մայր հողին: Մեր հայրենիքը հիմա ավելի սուր է, ավելի թանկ: Իսկ մեր ուսուցչուհին և մեր մտքերն էր հաղթանակի ու խաղաղության հույսով լցնում, իսկ այժմ էլ՝ մեզ հաջորդողների:

Ընկեր Շահրամանյան, ես դպրոցական նստարանից հեռացա հարստացած, քանզի ունեցա ձեզ նման դասուցիչ, որ նախ և առաջ եղաք մարդկային անխոչընդոտ բարձրության վրա՝ արդարացի, քաջալերող:

Վովա ԱՐԶՈՒՄՆԱՅԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՋՉԻՆ

ՊՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐԹ ՀԱՏՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՌՈՒՋՈՒՄԸ


Բանալի բառեր. Երկրաչափություն, տարածություն, գծագիր, կառուցում, գլան, կոն, հատույթ, պրոյեկցիա, էլիպս:

Դպրոցում, ԲՈՒՀ-ում երկրաչափության ուսուցման կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանում է սովորողների մոտ ձևավորել և զագացնել տարածական պատկերացումներ, որոնք իրենց մեջ ներառում են տարածական պատկերների մոդելների ստեղծում:


Այս հարցում կարևոր դեր են խաղում գծագրերը, որոնցում պատկերված են երկրաչափական մարմինները: Յուրահատուկ կարևորություն ունեն ձևավորման և զարգացման հարցում տարածական պատկերացումների համար տարածաչափական կառուցումների խնդիրները:

Տարածաչափական կառուցման խնդիրները իրագործվում են երկու տարբեր սկզբունքներով՝ պատկերացումների մեջ և պրոյեկցիոն գծագրերի վրա:

Պրոյեկցիոն գծագրերի վրա կառուցման գործիքների օգտությամբ իրականացվում է կառուցումների վերջավոր հաջողակալություն, որը հանգեցնում



Նկ. 1



Նկ. 2

է փնտրվող տարրին: Սավաճը ցուցադրենք երկու խնդիրների վրա:

Խնդիր 1. Կառուցել գլանի հարթ հատույթը, որը տրված է հարթության α հետքով և գլանի ստորին հիմքի վրա M կետով, որը նկարում նշված է գլանի տեսանելի մակերևույթի վրա:

Լուծում. Ըստ պայմանի M կետը գտնվում է գլանի կողմնային մակերևույթի վրա, հետևաբար այն պատկանում է որոնելի հատույթին, նկ. 1:

1. $\beta(a, M)$ հարթությունը հատում է գլանի եզրային AB և CD ծնորդները համապատասխանորեն X և Y կետերում, որոնց օրթոգոնալ պրոյեկցիաները α հիմնական հարթության վրա հայտնի են՝ $X_1 = \text{պր } \frac{x}{a}$; $X \in CD \Rightarrow X_1 \equiv D$:

2. $Y_1 = \text{պր } \frac{y}{a}$; $Y \in AB \Rightarrow Y_1 \equiv A$:

3. Կառուցենք M կետի պրոյեկցիան՝ $M_1 = \text{պր } \frac{m}{a}$:

4. $X_1, M_1 \in \alpha$, $X_1 \leftrightarrow M_1$; $X_1 M_1 \subset \alpha \Rightarrow X_1 M_1 = \text{պր } \frac{(XM)}{a}$:

Հետևաբար $X_1 M_1$ -ը հանդիսանում է XM օրիգինալ ուղղի պրոյեկցիան: Իմանալով օրիգինալ ուղղի պրոյեկցիան α հարթության վրա և նրա մի M կետ, կարելի է որոշել նրա երկրորդ կետը su , որը պատկանում է և ուղղին (հետքին) և a -ին: Այն նշանակենք P_1 -ով:

5. $X_1 M_1 \times a = P_1$:

6. P_1 և M կետերը միանիշորեն որոշում են ուղղություն: Քանի որ $P_1 M$ ուղղիղը և CD հատվածը գտնվում են միևնույն հարթությունում և զուգահեռ չեն, ապա $P_1 M \times CD = X$:

7. Տանենք ուղիղ X_1 և Y_1 կետերով, ընդ որում $X_1 Y_1 \times a = P_2$:

8. Քանի որ X , P_2 կետերը և AB ծնորդը գտնվում են միևնույն հարթությունում, ապա $P_2 X \times AB = Y$:

Ինտուիցիան մեզ հուշում է, որ գլանի հատույթում պետք է առաջանա էլիպս: Սակայն X , Y և M կետերը քիչ են հատույթի կառուցման համար: Ուստի կառուցենք Z , Q և T կետերը ևս: Նրանց մասին մեք նախորոք գիտենք, որ

ա) նրանցից յուրաքանչյուրը պատկանում է գլանին կամ ծնորդին;

բ) Z , Q , T կետերի պրոյեկցիաները ծնորդների հիմքերն են, որով անցնում են այդ ծնորդները:

գ) Z , Q , T կետերի պրոյեկցիաները պատկանում են գլանի հիմքի շրջանագծին, այսինքն՝ $Z_1 = \text{պր } \frac{z}{a}$; $Q_1 = \text{պր } \frac{q}{a}$; $T_1 = \text{պր } \frac{t}{a}$:

Ընտրելով գլանի հիմքի վրա Z_1, Q_1, T_1 կամայական կետեր, նրանցով կտանենք ուղիղներ՝ ծնորդներ: Այդ ծնորդները իրենց վրա կրում են փնտրվող Z , Q , T կետերը:

9. $Z_1 \leftrightarrow X_1$; $Z_1 M_1 \times a = P_3$; $P_3 X \times S Z_1 = Z$:

10. $Q_1 \leftrightarrow X_1$; $Q_1 X_1 \times a = P_4$; $P_4 X \times S Q_1 = Q$:

11. $T_1 \leftrightarrow Y_1$; $T_1 Y_1 \times a = P_5$; $P_5 Y \times S T_1 = T$:

Կառուցված X , Y , Z , Q , T կետերը, ինչպես նաև տրված M կետը պատկանում են գլանի մակերևույթին, ուստի նրանք որոշում են կոր, որով $\beta(a, M)$

հատող հարթությունը կտրում է երկրաչափական մարմինը՝ գլանային մակերևույթը: Միացնելով M , X , T , Y , Q , U կետերը սահուն կորով, կստանանք գլանի դիտողական հատույթը՝ էլիպսը:

Խնդիր 2. Կառուցել կոնի հարթ հատույթը, որը տրված է a հետքով գլանի ստորին հիմքի վրա և M կետով, որը նշված է կոնի տեսանելի մակերևույթի վրա:

Լուծում. Ըստ պայմանի M կետը գտնվում է կոնի կողմնային մակերևույթի վրա, հետևաբար այն պատկանում է որոնելի հատույթին, նկ. 2:

9. $Z_1 \leftrightarrow X_1$; $Z_1 M_1 \times a = P_3$; $P_3 X \times S Z_1 = Z$:

10. $Q_1 \leftrightarrow X_1$; $Q_1 X_1 \times a = P_4$; $P_4 X \times S Q_1 = Q$:

11. $T_1 \leftrightarrow Y_1$; $T_1 Y_1 \times a = P_5$; $P_5 Y \times S T_1 = T$:

1. $\beta(a, M)$ հատող հարթությունը հատում է եզրային ծնորդները որոշակի AB և CD կետերում, որոնց օրթոգոնալ պրոյեկցիաները α հիմնական հարթության վրա հայտնի են՝ $X_1 = \text{պր } \frac{x}{a}$; $X \in CD \Rightarrow X_1 \equiv D$:

2. $Y_1 = \text{պր } \frac{y}{a}$; $Y \in SA \Rightarrow Y_1 \equiv A$:

3. Կառուցենք M կետի պրոյեկցիան՝ $M_1 = \text{պր } \frac{m}{a}$:

4. $X_1, M_1 \in \alpha$, $X_1 \leftrightarrow M_1$; $X_1 M_1 \subset \alpha \Rightarrow X_1 M_1 = \text{պր } \frac{(XM)}{a}$:

Հետևաբար $X_1 M_1$ -ը հանդիսանում է XM օրիգինալ ուղղի պրոյեկցիան: Իմանալով օրիգինալ ուղղի պրոյեկցիան α հարթության վրա և նրա մի M կետ, կարելի է որոշել նրա երկրորդ կետը su , որը պատկանում է ուղղին, որը a -ի հետքն է, այն նշանակենք P_1 -ով:

5. $X_1 M_1 \times a = P_1$:

6. P_1 և M կետերը միանիշորեն որոշում են ուղղություն: Քանի որ $P_1 M$ ուղղիղը և CD հատվածը գտնվում են մի հարթությունում և զուգահեռ չեն, ապա $P_1 M \times CD = X$:

7. Տանենք ուղիղ X_1 և Y_1 կետերով, ընդ որում $X_1 Y_1 \times a = P_2$:

8. Քանի որ X , P_2 և AB ծնորդը գտնվում են միևնույն հարթությունում, ապա $P_2 X \times AB = Y$:

Ինտուիցիան մեզ հուշում է, որ հատույթում պետք է առաջանա էլիպս: X , Y և M կետերը քիչ են հատույթի կառուցման համար: Ուստի կառուցենք Z , Q և T կետերը ևս: Նրանց մասին մեք նախորոք գիտենք, որ

ա) նրանցից յուրաքանչյուրը պատկանում է կոնի ծնորդին;

բ) Z , Q , T կետերի պրոյեկցիաները ծնորդների հիմքերն են, որով անցնում են այդ ծնորդները:

գ) Z , Q , T կետերի պրոյեկցիաները պատկանում են կոնի հիմքի շրջանագծին, այսինքն՝ $Z_1 = \text{պր } \frac{z}{a}$; $Q_1 = \text{պր } \frac{q}{a}$; $T_1 = \text{պր } \frac{t}{a}$:

Ընտրելով կետերի կամայական դիրք կոնի հիմքի վրա, նրանցով կտանենք ուղիղներ՝ ծնորդներ: Այդ ծնորդները իրենց վրա կրում են փնտրվող կետերը՝ Z , Q , T :

Ո. ԱՍԱԲԵԼՅԱՆ

ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոն, մ.գ.թ., դոց.

ՄԱՐԱՆԱՍ ԼԻՆՔՈՒՆԻ ՆԱՄԱԿԸ ԻՐ ՈՐԳՈՒ ՈՒՍՈՒՋՉԻՆ

«... Ես հասկանում եմ, որ նա պետք է իմանա, որ բոլոր մարդիկ արդար չեն, բոլորն անկեղծ չեն, բայց սովորեցրեք նրան այն, որ յուրաքանչյուր սրիկայի կողքին կգտնվի հերոս, որ յուրաքանչյուր էգոիստ քաղաքական գործչի հաշվով կգտնվի մեկ նվիրված առաջնորդ: Սովորեցրեք նրան այն, որ եթե կա թշնամի, կգտնվի նաև ընկեր: Դրա համար ժամանակ կպահանջվի, ես գիտեմ, բայց եթե կարող եք, նրան սովորեցրեք, որ վաստակած մեկ դոլարն ավելի արժեքավոր է, քան գտած հիզգը: Սովորեցրեք նրան կարողանալ պարտվել, ինչպես նաև հաճախ ստանալ հաղթանակներից: Եթե կարող եք, շեղեք նրան նախանձից, սովորեցրեք ցածր ծիծաղելու գաղտնիքը: Թույլ տվեք նրան շուտ հասկանալ, որ կրվասերների և պարծենկոտների նկատմամբ հաղթանակ տանելն ամենահեշտ բանն է: Եթե կարող եք, սովորեցրեք նրան հետաքրքրվել զրքերով... Տվեք նրան նաև ազատ ժամանակ, որ նա կարողանա մտորել հավերժ գաղտնիքների՝ երկնքի թռչունների, արևի շողերում երևացող մեղուների և բլուրների կանաչ լանջերի ծաղիկների մասին: Երբ նա դպրոցում կլինի, սովորեցրեք նրան, որ անհաջողություն կրելը շատ ավելի պատվաբեր կլինի, քան խարդախություն անելը... Սովորեցրեք նրան վստահել իր սեփական մտքերին, եթե նույնիսկ ինչ-որ մեկն ասում է, որ նա սխալվում է... Սովորեցրեք նրան լինել փափուկ՝ փափուկ

մարդկանց հետ, և չոր՝ չոր մարդկանց հետ: Աշխատեք որդուս ուժ տալ՝ չհետևել ամբոխին այն ժամանակ, երբ բոլորը հարում են հաղթած կողմին:

Սովորեցրեք նրան լսել բոլոր մարդկանց, սակայն սովորեցրեք նաև, որ այն ամենը, ինչ նա լսում է, դիտարկի ճշմարտության անկյունից և ընտրի միայն լավը:

Եթե կարող եք, սովորեցրեք ծիծաղել տխրության մեջ... Սովորեցրեք նրան, որ արցունքների մեջ ոչ մի ամոթ բան չկա: Սովորեցրեք նրան ծիծաղել ցնցիկների վրա և զգուշանալ չափազանց սիրալիրությունից:

Սովորեցրեք նրան վաճառել ուղեղն ու մկանների ուժն ամենաբարձր գնով, բայց երբեք չվաճառել սիրտը և հոգին:

Սովորեցրեք նրան չսել ոռնացող ամբոխին, այլ կանգնել ու պայքարել, եթե նա գտնում է, որ ճիշտ է:

Վերաբերվեք նրան փափուկ, բայց ոչ չափազանց նուրբ, քանի որ միայն կրակն է պողպատին տալիս բարձր որակ: Թույլ տվեք նրան տղամարդկություն ունենալ, որպեսզի լինի անհանդուրժող (յուրաքանչյուր վատի հանդեպ)... Թույլ տվեք նրան ունենալ համբերություն, որ դառնա խիզախ... Սովորեցրեք նրան միշտ բարձր հավատ ունենալ իր նկատմամբ, քանի որ այդ դեպքում նա բարձր հավատ կունենա մարդկության հանդեպ:

Սա հեշտ գործ չէ, բայց տեսե՛ք՝ ինչ կարող եք անել... Իմ որդին այնքան լավն է»:

Արթուր Լինքոլն, 1855թ.

ՄՏՈՐՈՒՄ

ՀՈՐԻՉՈՆՆԵՐԻՑ ԱՆԴԻՆ



Հուլիսի 28-ին լրացավ մեկ տարին այն օրից, ինչ մեզ հետ չէ անվանի արձակագիր, Հայաստանի և Արցախի գրողների միությունների անդամ, համեստագույն մարդ, ընկեր, հայր ու ամուսին, հայրենի եզերքի ամենօրյա հոգսերով ու արարչագործ կյանքով ապրած ԱՐՏԱՇԵՍ ՂԱՅՐԻՅԱՆԸ:

Արտաշես Ղահրիյանը ծնվել է Հաղորթի Սեծ Թաղեր գյուղում, 1937-ին: Միջնակարգն ավարտել է ծննդավայրում: Բարձրագույն բանասիրական կրթություն է ստացել Երևանի պետական համալսարանում: 37 տարի աշխատել է Հայաստանի թերթերի և ամսագրերի հրատարակություններում՝ հրատարակելով «Տոհմական» ու «Պատրանք» պատմվածքների ժողովածուները:

1993-ին վերադարձել է ծննդավայր՝ հայրենի եզերքն ու հայրական օջախը շեն պահելու մղումով: Առավել, քան երբևէ, ապրել է ստեղծագործ կյանքով՝ պատմվածքներով, էսսեներով, հոդվածներով, ակնարկներով, բանաստեղծական շարքերով ու քառյակներով պարբերաբար հանդես գալով ԱԳՄ պաշտոնաթերթ «Եղիցի լույս»-ում: Արցախում հրատարակել է «Լեռան հուշ» պատմվածքների, «Թախծոտ մեղեդի» բանաստեղծությունների, «Տոհմական» եռաշարի ժողովածուները:

Արտաշես Ղահրիյանն արդի հայ հոգեբանական արձակի ինքնատիպ դեմքերից է, որը համահայկական գրական ասպարեզ է բարձրացնում հայի մեր տեսակը՝ իր երբեմն պարզ, հաճախ՝ բարդ ու հակասական, դրական ու բացասական նրբանայնությամբ՝ ստեղծելով սրտի, խղճի ու ազնվության գրականություն, որն ամբողջությամբ մեզ մարդկային հոգեկերտվածքների, բնավորությունների տարեգրություն է:

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, բանաստեղծուհի ԺԱՆՆԱ ԲԵԳԱՐՅԱՆԻ «Հորիզոններից անդին» մտորումը Արտաշես Ղահրիյանի հետ է:



«Հավատում եմ, որ ոչ մեկի սրտում ծանր բան չեմ թողել»: Ա. ՂԱՅՐԻՅԱՆ

Այլևս ոչինչ նախկինը չէ: Ամեն մտմտող մնալուն տողի այլևս չի փոխվում: Ցավի ճիւղներից չի պոկվում, բացարձակապես բառին ճորտանալը, իրականությունից վեր բարձրանալը, գեղարվեստի վերին ոլորտների տիրույթում մենանալը գրեթե անհնարին է դարձել: Հողի ծանր տնքոցը չի թողնում: Այն հողի, սիրելի՛ Արտաշես, որին դու փարվեցիր ամբողջ եռօրյամբ, սիրեցիր որդիաբար, հայրաբար, տիրաբար: Սիրեցիր ու արարեցիր: Արարեցիր ազնվությանը ամբողջ չափաբաժնով, գրականության երդվյալի հավատարմությամբ, թեև քո բոլոր ինքնավերլուծություններում ու ինքնազննատմումներում ավստասանքի այն կեցողունը կա, թե ժամանակը ամբողջությամբ կոչմանը նվիրել չես կարողացել, հացի խնդիր լուծելը չի թողել: Միայն արդարացի չես, երբ ասում ես, թե ի վերուստ թեզ գրական տաղանդ տրված չէր, ու սովորելով, միայն սովորելով ես հասել կայացած հոգեբանական արձակի և ինքնատիպ, զուտ արտաշեսադարձիչանական լեզվամտածողության այն բարձր նվաճմանը, ինչն այսօր առկա է քո ամբողջ գրականության մեջ, որը, ճիշտ ես, ծավալով մեծ չէ, բայց խորքային առումով, հավատա՛, անչափելի է: Այդպես չի լինում: Միայն սովորելով, մի կյանքով այդքանից հասնել չէր լինի: Աստվածային տաղանդի շնորհիվ միայն կարող էիր հասնել խորքային այդ ընկալումներին ու ընդգրկումներին, գեղարվեստական տարեգիրը դառնալ ետպատերազմյան՝ անցյալ դարի 40-50-60-ական թվականների, արցախյան գյուղական կյանքի: Եվ ճակատագրի այնպես դասավորվել, որ երեսույոթ տարի Երևանում ապրելուց հետո, 1993-ին՝ եզերքիդ համար դրամատիկ մի ժամանակում, Արցախյան առաջին պատերազմից հետո առերևույթ հանգիստ թվացող, բայց էպպես հակադրություններով ելևէջող կյանքի ակնաստեսն ու անմիջական մասնակիցը դառնայիր:

Այն մտայնությունը կա, թե դու քո գրականության մնացել ես Հրանտ Մաթևոսյանի շվաբի տակ: Չկա այդպիսի բան: Աբսուրդ է: Հրանտ Մաթևոսյանի շունդից գրական մուտքը, երևանյան տարիներիդ մտերմությունը

նրա հետ, թեմայիդ ընտրության մեջ նրա խորհուրդները, առաջին պատմվածքիդ՝ «Իմ հոգու աստղերի» տպագրությունը՝ «Գրական թերթում»՝ նրա անմիջական հովանավորությամբ, անշուշտ, իրենց հետքը թողել են քո գրական ճակատագրի վրա, բայց այլ է քո բնույթը, հոգևոր խմորումների ու ինքնարտահայտման թափը: Դու արցախցից ես, մեծադեմքից ես մինչև ուղն ու ծուծը և մեր տեսակն ես բերել գրականության, բերել ես՝ թեզ ուսուցիչներ ունենալով Մեծ Լոռեցուն, Չեխովին, Դոստոևսկուն, Սարդյանին: Մարդկային հոգու խոր դրամատիզմի վարպետ գեղարվեստականացումը քո գրչի բարձր նվաճումներից է, և մշակակություն չունի, թե որտեղ է ծնվել, կյանքի հորձանուտի մեջ նետվել հերոսի, մեծ քաղաքների հոգեկործան աղմուկներում, թե՛ մի հեռավոր գյուղի թվացյալ անդրորի ճոճքում: Այս կտրվածքով քո մեծ ուսուցիչը անկրկնելի Բակունցն է: Հավատարիմ լինելով ավանդականին՝ դու կարողացար մտնել քո ժամանակի խորխորատները և խորունկ լրջությամբ վեր հանել առերևույթ հանգիստ թվացող կյանքի կնճիռները, դրանք չափել լայնք ու խորքով: Դու իրոք կարողացար անգոյանալ ներշնչանքիդ մեջ, ստեղծել գործեր, որոնց մեկ անգամ առնչվելուց այլևս դառնում ես քո բառ ու բանի հպատակը, քո գրական ազնվության երկրպագուն:

Ծնունդ լինելով գյուղական միջավայրի՝ դու կարողացար չօտարվել այդ միջավայրից, կարողացար առատորեն սնվել ու գրական նյութ դարձնել այդ միջավայրի անցուդարձը, մարդկային հարաբերությունները, մարդու՝ մարդ մնալու տառապագին արվեստը:

Գրականագիտական քո մեկնություններում դու արհեստավարժ ես, հայ, համաշխարհային, հատկապես ռուսական, գրական նվաճումների վերլուծումներում՝ ինքնատիպորեն ճշմարտացի: Եվ համաշխարհային գրականության նվաճումների բարձունքներից էլ կարողացել ես կատարելության հասցնել կերպարակերտման արվեստը: Անկասելի է քո սերը գեղարվեստականի համդեմ: Տարիների հեռվից ճանաչելով թեզ՝ տեսնում եմ, թե որքան կաս դու քո հերոսների մեջ: Դու քո հերոսն էս:

Դու Ամբակունցնց Մխիթարն ես, որ գրի, գրականության, գրաբարի իր իմացությամբ առնվազն Ղևոնդ Ալիշանի համբավը պիտի ունենար: Բայց այլ էին Ղևոնդ Ալիշանի ժամանակները և այլ՝ քո: Քո ժամանակում նյութի իշխանությունն ամբարտավանորեն խժռեց հոգևոր շատ արժեքներ, թեև դու, միևնույն է, մնացիր քո լավատեսության մեջ՝ հայացքդ պահած արցախյան ոգու անսահմանությանը և այնտեղից քաղելով քո բառ-միտքը:

Ժողովրդից ծնված գրչի մարդը միշտ էլ ժողովրդական ցավի համակիրն է, նրա երբեմն տեսանելի, երբեմն անտեսանելի մորմոքների տիպականացումը: Դու այն անամուն գիտունն ես քո հերոսներից, որ անկախ իրենից մտքում կամ բարձրաձայն շուկում է պատմիչ Եղիշեին Եղիշե Զարեցիի հետ շփոթող տգետ Վարժապետի սխալները: Դու նաև հարազատից խայթված ու վիրավորված Ավագի եղբայր Բանաստեղծն է, որ անմար հավատով սպասում է Մոցարտի Աստծու վերադարձին:

Ետ ու առաջ եմ գնում պատմվածքներիդ մեջ, հերոսներիդ ճակատագրերում: Ժամանակի հոլովության մեջ շատ բան սպասեցիք մեզ բաժին հասած իրադարձությունների փոփոխություններից, բայց տարիների մեջ մեր անմնացորդ հավատից փշրանք անգամ չմնաց, շարունակեցին դատարկվել մեր պայպեմակուտները, երբեմնի արտատեղերը մացառակալեցին, գավակն օտարվեց ծնողից, երեկվա փուլքոտ վաչեները կյանքի տիրակալներ դարձան: Աշխարհի սուտը չպակասեց: Քաղաքակրթության նվաճումները դարձան մեր թշնամիները: Օտարվեցինք ազգային արմատներից՝ օտարամոլությունը համարելով ժամանակի մեծ նվաճում: Շահի գիտակցումը կյանքի առաջնորդ ուժ դարձավ: «Պատրանք»-իդ Օսանի ողբը այսօրվա համար շատ է արդիական: Մերձավորից խաբված Թևանը շարունակում է կաթվածահար մնալ: Կյանքի հորձանուտում լլկված կինը՝ Սիրուշը, մի դժբախտությունից մի այլ դժբախտություն է իրեն նետում: «Մարդկային ցեղս, որ այսպես իրարից հեռանաք, էս անշունչ-շնչավոր աշխարհը մեր մասին ի՞նչ կմտածի», - «Այգու ճանապարհին»

պատմվածքիդ հստորվի այս մտահոգությունը՝ որպես սեպ, խրվում է ժամանակի զարկերակի մեջ, ու ծնվում են հոգու դառնությունը, ցավը, դրամատիզմը, որ հոսում են քո տողերի միջով, վերջնական հաշվով դառնում մարդկային ճակատագրերի ու բնավորությունների տարեգրություն: Ի՞նչ տառապագին որոնումների գնով են ձևավորվել քո լեզվամտածողությունը, կյանքի քո իմացությունը, խոսքի քո ազատությունը: Անպարկեշտ արտահայտությունն անգամ ներծուլվում է խոհականությանը ամբողջականությանը, ինքնարտահայտմանը նոր երանգ հաղորդում:

Դու իշխում ես քո ժամանակի վրա և վարպետորեն դրանով վարակում ընթերցողիդ, որն, ինչպես դու հավատում ես, դեռ գալու է: Պիտի գա: Այսօր քո բարձր գեղարվեստը պատմաճանաչողական հզոր ուժ է ստանում: Դու մեր ժամանակի Հակոբ Մեծուրին ես, որի ծննդավայր Արմտանը, բարբարոսաբար ավերվելով թուրքից, հար կենսունակ է մնում՝ շնորհիվ Մեծուրու գրականության: Այդպես կենսունակ է մնալու ծննդավայրը՝ Մեծ Թաղերը, քո բառ ու տողով, քո գրականությամբ:

Դու քո հայրենապաշտությամբ հայրենի եզերքիդ վերջին պահապաններից մեկը դարձար: Այո, վերջին: Քեզանից հետո երկինքը փլվեց, և ցավը ճիրանների մեջ առավ հայրենի եզերքիդ ամեն մի թիզ հողը: Ուրխն իրեն տեր հռչակեց Իշխանագետիդ, Տկողնուտիդ, Արծվատափիդ, Դերունց խութիդ, Վարարակնի ձորիդ, Բախշունց տանձու թումբիդ, Քիրսի արևոտ ձյուններիդ, Հարոսիդ, Դիզափայտիդ...

Առավել, քան երբևէ, հավատում եմ մարդու երկնային կյանքի գոյությանը, բայց չգիտեմ՝ ի՞նչ պատասխան ունի հոգիդ երկրային կյանքիդ տագնապներին: Արդյոք հինձա՞ էլ ես կարծում, թե Քիշ անրոցի հզոր բարձունքից ցած՝ ձորերը խորունկ դողանցով կարթնացնեն այս երկրի ոգին, վաղը, արևի տաք ծավալումից, սարերի կուռ շղթան՝ Դիզափայտից մինչև Քիրս, կաթափվի քնկտությունից ու կշարունակի որոտընդոտ երթը դեպի իր հեռավոր հորիզոնները:

Արտաշես ՂԱՅՐԻՅԱՆ

ՀՐԱԾԵՇՏԻ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ

Դեռ ելնում եմ լեռը կյանքիս՝ հոգնած մտքով, ուժս սպառ, Անվերնագիր ցավս այնտեղ լուռ պարպելու անհուններում,

Գիտեմ, խաղաղ մենությունում, ինչպես միրհում հոգեպարար, Ձրույց կանգնե խռովքիս հետ, ինքս ինձնից հայցեմ ներում:

Դեռ հեռու է ժամը վերջին, լանջը՝ արև, հույսը՝ կանչող, Քայլ եմ անում հուշի միջից, իմ բյուրավոր խաթարումից, Ոչինչ, ոչ ոք խոսիս մեջ չէ՞ հևքս բռնող կամ մեղանջող, Ես եմ՝ ճանփորդ անչար ելնող աստվածային արարումից:

Գիտեմ նաև՝ ճանփաս դեպի բարձունք ու լույս չի ուղրվում,

Կյանքիս լեռան իրիկնացող լանջիվար է սահում անձուկ, Բայց թվում է՝ ելնում եմ վե՛ր, թեպետ հոգնած՝ չեմ մոլորվում Ծուրջաշխարհի հնայքներում, վայելքներում այս վաղանցուկ:

Վեր եմ գնում, վար եմ իջնում, ես իմ լեռան հունչը եղա, Կածանները նրա քարոտ ոտնահետքերն իմ կիիշեն, Վերի-վարի ուղրներում, աշխարհ, անկոչ հյուրդ չեղա, Միտքս հոգնած, ուժս սպառ՝ ցավդ եմ տանում լուռ ու անքեն...

ԱՆՎԵՐՇԱՆ ՎԻՇՏ

Կամաց գնա, խոնջացել եմ, ժամանակ, Ուրքս ծանրած, միտքս հոգնած ու խառնակ, Ո՛ւր եմք գնում անպատասխան ու անգետ Հավերժական անշեղ երթիդ-առաջ, ե՛տ:

Թե որ պահ մի անգիջում ես ու անկարգ, Ու ես անզոր՝ հևք առնելու, շունչ ու ջանք, Ի՞նչ է հուշում Աստված՝ տոկա միշտ առաջ, ժամանակի ուղրանում՝ աննահանջ:

Ո՛ւր հասցրիր շնչավորիս ուժասպառ, Ո՞ւն ես թողնում՝ մեջս մարած բան ու բառ, Ինքդ ո՛ւր ես ճեպով սուրում խելագար, Անհանգրվան անհայտություն՝ քո խավար:

Ամենկնելի, անխղճահար ու աննյութ, Բայց ճշտադատ, անհաշտ վարքիմ մեր այս մութ, Ինչպե՞ս է, որ հավերժ կարգում ու ճշտում, Բայց թողնում ես մեզ անվերժան մեծ վշտում...

ԿԱՆՉ ԵՐԱԽՏԻՔԻ

Կռունկների երան անցավ հայրենիքիս երկնի լայնքով, Երախտիքի կանչ հղելով որպես դարձի երդում կյանքով, Ջիմջ լազուրում ալիքվելով, ճախրում էին իրենց հեռուն՝ Մեր սրտերը պարուրելով անհայտությամբ մի սևեռում... Կա՛ հեռավոր-հեռու երկրում երանական եզերք կանչող, Արեգական ոսկե տենջի կարոտախտով հավերժ տանջող, Որ այստեղից անդ կտենջան ու այնտեղից մեզ կդառնան, Որ մեր հոգու խոր անհայտում միշտ դարձդարձում վեր համբառնան...

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎԱՐՊԵՏԱՅ ԴԱՍԵՐ ԱՐՃՄԵՈՒՄ ԱՆԽԱՐՀԱՆՈՉԱԿ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՅ

Պատերազմն ավարտվելուց հետո անցել են ամիսներ, սակայն աշխույժ ու բնականոն կյանքի անցնելու համար դեռ հաղթահարելու շատ բան կա: Խոստովանենք, որ ինչքան էլ արցախցիներն ուժեղ կամք ու ոգի ունենան, միևնույն է, այս ծանր պահերին քաջալերանքի ու ոգեւորության կարիք, այնուամենայնիվ, ունենում են: Մարզաշխարհում նույնպես գունագեղ ներկայացումների եւ մարզական աշխույժ միջոցառումների կարոտ կա: Հուրախություն մենամարտերի սիրահար կամ առհասարակ մարզասեր արցախցիների, հնգօրյա այցով Արցախ է ժամանել աշխարհահռչակ հայ մարզիկների հզոր կազմ:

Արցախի խառը մենամարտերի (MMA) ֆեդերացիայի նախագահ եւ մարզիչ Գարեգին Աղաբալյանի նախաձեռնությամբ հուլիսի 23-ին Ստեփանակերտ ժամանեցին հզորագույն մարզիկներ Ամերիկայից, Ուկրաինայից, Ռուսաստանի Դաշնությունից, առավելապես մոսկովյան "Львиное сердце" մարտական ակումբի լավագույն մարզիկներ: Հնգօրյա այցի նպատակն է Արցախում կազմակերպել

ուսումնամարզական հավաք եւ վարպետության դասեր MMA հավաքականի մարզիկների համար, ոգեւորել արցախցի մարզիկներին, բարձրացնել բարոյահոգեբանական եւ տեխնիկատակտիկական մակարդակը, ինչպես նաեւ կազմակերպել լավ ժամանց մեր մարզիկների հետ:

Անվանի մարզիկներն աշխարհում հայտնի են ինչպես բարձրագույն տիտղոսներով, այնպես էլ մենամարտային մարզածներում ունեցած պրոֆեսիոնալիզմով: Մարտական ոգի եւ մարզական պրոֆեսիոնալիզմ, ուժ եւ հզորություն. դա են խորհրդանշում հետեւյալ անունները. Արմեն Դուլյան, Հրաչիկ Բոգիմյան, Ժորա Այվազյան, Մորիս Բուլեյան, Վարշամ Գեւորգյան, Տարոն Գրիգորյան, Նազար Արզումանյան, Կարեն Փասիկյան, Վարդան Բաբայան, Վահե Սահակյան, Էդուարդ Վարդանյան, Վազգեն Ղազարյան, Սահակ Պետրոսյան:

Այս մարզիկների այցն Արցախ կոգեւորի մյուս աշխարհահռչակ մարզիկներին եւս գալ Արցախ: Այդ մտադրությամբ է Գարեգին Աղաբալյանը նախաձեռնել այս մասշտաբի մարզահավաք, որի շարունակականությունը եւս երաշխավորված է նախաձեռնողի կողմից:

Տարբեր երկրներից լավագույն մարզիկների Արցախում գտնվելը եւ վարպետության դասեր տալը կարեւոր մարտավարական

նշանակություն ունի ոչ միայն Արցախում խառը մենամարտերի զարգացման, մարզիկների մարզական վիճակի էլ ավելի բարելավման համար, այլեւ այն առումով, որ դա մեծ քայլ է հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման համար, ինչը արցախցիների համար դրական հոգեբանական ազդեցություն ունի հետպատերազմյան ժամանակաշրջանում: Բացի դրանից, մարզիկները հանդես են գալիս պրոֆեսիոնալ ռինգերում եւ ունեն ավելի շատ փորձ, որից շատ բան ունեն սովորելու մեր մարզիկները:



ու արարել, իսկ իրենք պարտավորություն են զգում գալ այստեղ, կատարել փորձի փոխանակում, քաջալերել ու ոգեւորվել Արցախով, որը նույնպես մեր հողն է:

Մարտական սամբոյի աշխարհահռչակ չեմպիոն Էդուարդ Վարդանյանը նշում է, որ իրենց փոխանցած փորձով, տեխնիկական հմարների ցուցադրմամբ օգնում են արցախցի մարզիկներին, որ նրանք կարողանան ավելի լավ արդյունքի հասնել ու միայնակ չզգալ իրենց:

Առջեւում խառը մենամարտերի եվրոպայի եւ աշխարհի առաջնություններն են, որոնց պատրաստվում են մասնակցել արցախցի մարզիկները: Ավելի լավ արդյունք ունենալու համար հզորագույն մարզիկների հետ վարպետության դասերը պարտադիր են մեր մարզիկների համար: Արցախ եկած MMA աստղերի վարպետաց դասերը, խորհուրդներն ու փորձի փոխանակումը կօգնեն մեր մարզիկներին մրցումներում ավելի լավ հանդես գալ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Կամո ԲԱԼԱՅԱՆ

ԱՆԱԳՆԱՅՈՂ ՏԱԳՆԱՊ... «ՏԱԳՆԱՊՆԵՐ» ԸՆՐՔԻՅ

Տազնապահար են բոլորը, Որ արյունով է բացվում օրը, Որ թույլերին կործանում է հզորը, Որ մարդը դարձել է գազան և ավելի դաժան, Եվ մարդկային կյանքը՝ այսքան էժան, Երբ ամեն ինչ արվում է բաժան-բաժան: Եվ ամեն ինչ դարձել է առ ու ծախ, Եվ տազնապահար ես, իմ սրբազան Արցախ: Եվ ամեն ինչ դարձել է դժգույն, Եվ չունես, երկիր իմ, խաղաղ քուն: Խոցում, ծվատում, հոշոտում, խուժում և պաշարում են Մարտահրավերները բոլոր կողմերից անհամար, Տոկում ու դիմակայում ես դեռ, երկիր իմ համար:

*** Տազնապահար է անգամ բանաստեղծը, Չգիտե արդեն իր գրածի մեջ որն է ճիշտը, որն է կեղծը, Եվ որտեղ է սրբությունը և նախաստեղծը, Եվ տազնապարտ ենք, որ կորուսյալ է դառնում անեղծը:

*** Տազնապարտ է երկրի զինվորը, Երբ թշնամու արկն է ծվատում օդը, Եվ թանձրանում է ծանր վառողահոտը, Եվ լսում ենք հազարների մահվան բոթը: Եվ տազնապարտի, տառապանքի, ցավի ու վշտի մեջ Չգիտենք, թե կվերջանա՞, արդյոք, այս խառնաշփոթը:

*** Տազնապարտ է լեռը, երբ ցնցվում են հիմքերը, Տազնապարտ է դարը, երբ որոտում են գեները, Տազնապարտ է արտը, երբ ծեծում է կարկուտը, Տազնապարտ է լույսը, երբ պատում է մուրը, Դարավոր անտառը, որ կարող է դառնալ մի օր Կայծակի ու կրակի ճարակ, Տազնապարտ է նույնիսկ ծովը, Որ գուցե մի օր դառնա ցամաք, Նույնիսկ արեգակը, հանկարծ էլ չունեցավ ջերմություն ու կրակ, Տազնապարտ են աղբյուրը, վտակը, գետը, գետակը, Հանկարծ որ տարին լինի երաշտ, Տազնապարտ են ժամանակները անհաշտ, Եվ մարդը, որ դարձել է նյութապաշտ, Տազնապարտ է հզոր երկրի հզոր նախագահը, Երբ ոտքերի տակ երերում է գահը:

*** Տազնապարտ ենք, որ երկիր այս գունդը Գուցե հաջորդ պահին գլորվի անդունդը, Տազնապարտ ենք, որ ծանր բեռը մեղքի Մի օր պիտի երկիրը ճեղքի, Տազնապարտ ենք, երբ չգիտենք, թե ինչ կլինի այս ամենի վերջը, Գուցե չար ուժը փորձում է շրջել մեր պատմության վերջին էջը:

Տազնապարտ ենք ազգովի, տազնապարտ է երկիրը, տազնապարտ է Արցախը, Երբ չգիտենք, թե ինչով կավարտվի նենգ թշնամու հետ այս բախումը, Գուցե և նորից վերսկսվի պատերազմը՝ արյունախումբ: Եվ տազնապահի հայացքից կախվել է հարցականը, Խաղաղության մեջ կապրե՞նք, թե՞ նորից կպայթի ականը:

*** Տազնապարտ ենք ամեն վայրկյան, գուցե և հաջորդ պահին Սկսվի՞ անկախության համար նոր գոյամարտը. Ո՞վ գիտի, գուցե դարավոր սև այգուց պիտի ծագի Ամենակործան երրորդ աշխարհամարտը... Ամենուր, ամեն պահ տազնապարտ է մեզ կրծում, Եվ տազնապահից չկա արձույն:

*** Տազնապահար է լինում անգամ Տերը, Որ երկրի վրա առուծախ է դառնում ու սառչում սերը, Տազնապարտ է խորանը աղոթքի՝ Տեսնելով կեղծիքը սրտի ու մտքի:

*** Տազնապարտ ենք և կորցրածի համար, Տազնապահար ենք գտածի համար:

*** Այնքան են ահազանցել ահն ու սարսափը, Տազնապահար է հենց ինքը՝ տազնապարտ.

*** Տազնապահարույց է հենց ինքը՝ տազնապարտ. Տազնապարտ գեներն է չարի, Տազնապարտ դարձել է տերը տազնապալից դարի:

ՄՐՅՈՒՅԹ

ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՄՐՅՈՒՅԹ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթում (2021թ., հ. 20-22), տեղակայված են նաև Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):

2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:

3. Անձնագրի պատճենը:

4. Ինքնակենսագրություն (Ձև 4):

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Արցախի Հանրապետությունում աշխատելու իրավունքը փաստող վկայագիր:

8. Արցախի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան հանրակրթական ուսումնական հաստատությունում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթները տեղի կունենան 2021 թվականի օգոստոսի 23-27-ն ընկած ժամանակահատվածում: Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություն:

Table with 4 columns: Question ID, Question Text, Answer Options, Correct Answer. Contains 23 numbered questions related to Armenian history and geography.

Table with 4 columns: Question ID, Question Text, Answer Options, Correct Answer. Contains 27 numbered questions related to Armenian history and geography.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՄԻՆԻՍՏՐԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 5.08.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: